

ԸՆԴԴԵՄ ՊԼԱՆԱԿՏՈՒՄՆ

### ԱԶԳԱՅԻՆ ՇԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԸՉՕՐԱԳՈՅՆ ՊԱՏՆԵՇՆ Է

Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Նախագահ գործիչ Լահուտ երկրի վերահաստատեց, թե լիբանանցիները չեն ուզում վերադառնալ անցյալի ողբերգություններուն, եւ անոնք վճռած են վերջնականորէն դարձնել այդ էջը: Ան նաեւ ըսաւ, որ ազգային հաշտութիւնը հզօրացոյն պատնէջն է ընդդէմ պառակտումի եւ համայնքային կիրքերու հրահրումի փորձերուն:

Փունիկ - Քեբուան - Ֆթուհ շրջանի Առեւտրականներու Միութեան պատուիրակութիւնը ընդունած ատեն նախագահ Լահուտ նաեւ վերահաստատեց, թէ յաւանտես է ազգային եւ այս հանգրուանի մարտահրաւէրները դիմադրաւորութեամբ ընդդէմ: Ան ընդգծեց, որ այս հանգրուանին անհրաժեշտ է, որ բոլոր կողմերը գործակցին երկրի անտեսութիւնը վերականգնելու համար: «Կառավարութիւնը պիտի շարունակէ վարչական եւ դրամական բարեկարգումները: օրէնքներ կը բարեփոխուին, նոր օրէնքներ կ'որոշուին քայլ պահելու համար գարգացումներուն հետ եւ հնարաւորութիւն ընձեռելու առեւտրականներուն ու գործարարներուն, որպէսզի անոնք կարենան յաղթահարել իրենց գործառնութիւնները խոչընդոտող դժուարութիւնները», ըսաւ ան:

Նախագահ Լահուտ նշեց, որ այս զգալուն պայմաններուն մէջ անխնայ աշխատանքով ու երկիւստութեամբ կարելի է հասնիլ մեր նպատակներուն, իսկ հիմնական

նր կը մնայ լիբանանցիներու միութիւնը: Տնտեսական վիճակը բարելաւելու համար պետութեան միջոցառումները կրնան ժողովրդային չլլալ եւ զէջ անդրադարձներ ունենալ կարգ մը պետական պատասխանատուներու վրայ, բայց այս հանգրուանին կարեւորը ժողովուրդին շահն է ոչ թէ անոնց կամ այլ կողմերու շահերու պահպանումը:

Նախկին երեսփոխան Ջահէր Խաթիբ երկրի նախագահ Լահուտի հետ տեսակցելէ ետք յայտարարեց, որ ան նախանձախնդիր կը մնայ ազգային կեցուածքի սկզբունքային հիմքերուն եւ վճռած է պահպանել ազգային միասնութիւնը, ինչպէս նաեւ բանակը, որ երաշխիքն է քաղաքացիական խաղաղութեան, ապահովութեան, եւ ներքին հարցերով տարուելու վտանգի կանխարգիլման:

Խաթիբը ըսաւ, որ նախագահ Լահուտ կառչած կը մնայ դիմադրութեան եւ ժողովուրդի իրաւունքին՝ վերատիրանալու Լիբանանի բոլոր իրաւունքներուն, այսինքն՝ հողին, ջուրին, իսրայէլեան բանտերու մէջ արգելափակուած լիբանանցիներու տունը արձիւն, պաղեստինցիներու բնակեցման մերժումին, բոլոր գաղթականներու տունը արձիւն իրաւունքին եւ ինքիֆատային հետ գորակցութեան:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ այս բոլորին համար հիմնական նշանակութիւն ունին Լիբանանի եւ Սուրիոյ ճակատագրական եւ միացեալ պայքարի ծիրէն ներս յարաբերութեան եւ միջարարական գորակցութեան ամրապնդումը, համարարական միացեալ ռազմավարութեամբ մը դիմադրաւորութեամբ արաբ-սիրոնական հակամարտութեան այս հանգրուանի ճակատագրական մարտահրաւէրները:

Շարք՝ էջ 10

### ԱՍՍՏ ՍՊԱՆԻԱ ՊԻՏԻԱՅՅԵԼԷ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասադ յառաջիկայ ամիս Սպանիա պիտի այցելէ:

3 Մայիսին Ասադ պիտի ժամանէ Մատրիտ, ուր տեսակցութիւն մը պիտի ունենայ վարչապետ Խոսէ Մարիա Անարի հետ: Ան նաեւ ներկայ պիտի ըլլայ արաբական մշակութիւնի նուիրում ցուցահանդէսի մը բացման արարողութեան հորտոպայի մէջ:

Լատիտեղեակ աղբիւրներ ըսին, որ նախագահ Ասադ սպանացի պատասխանատուներուն հետ պիտի քննարկէ Միջին Արեւելքի տագնապը եւ Սուրիա - Սպանիա յարաբերութիւններուն առնչուող հարցեր:

Նախագահ Ասադի Սպանիա այցելութիւնը պիտի ըլլայ անոր առաջինը դէպի արեւմտեան երկիր մը:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՔՈՉԱՐԵԱՆ ԵՒ ՇԻՐԱՔ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՔԻ ՌԻԷՍԹԻ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան Ուաշինկթընէն Երեւան վերադարձի ճամբուն վրայ Փարիզի մէջ հանդիպում ունեցաւ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հետ:

Հայաստանի նախագահի բանբեր Վահէ Գաբրիէլեան ըսաւ, որ 45 վայրկեան տեւած հանդիպումին նախագահները քննարկեցին Քի Ռիէսթի բանկցութիւններու արդիւնքներուն եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման հեռանկարներուն վերաբերող հարցեր:

Շիրաք վստահեցուց, որ պիտի շարունակէ աջակցիլ հարցին խաղաղ լուծման համար թափուող ջանքերուն: Իսկ Էլիզաբէթ Բիւսթի մէջ յառաջադրեց արմատազերծելու է եւ նախագահ Քոչարեան ցանկացած է հանդիպում ունենալ ժաք Շիրաքի հետ՝ անոր տեղեկացնելու համար բանակցութիւններու մասին եւ ամրապնդելու Քի



Նախագահ Քոչարեան «Ջուրթոնգ» օդակայանին մէջ կը պատասխանէ լրագրողներուն հարցումներուն:

Ռիէսթի մէջ ձեռք բերուած պայմանաւորութիւնները տեղի ունեցան այլ տարապոլ, այսինքն՝ Միւսթի խմբակի համապատասխանութիւններու անհրաժեշտութեան մասին: Միւսթի խմբակի համապատասխանութիւնները կը կատարէր իւրաքանչիւր կողմին հետ: Ան ըսաւ, որ հայկական կողմը դրական կը գնահատէ իր կատարած քննարկումներուն արդիւնքները: Ան նշեց, որ համապատասխանութեան լատիտես յայտարարութեան հիմամբ կատարուած է Երեքշաբթի օր Շիրաք - Քոչարեան հանդիպումէն ետք:


Նախագահ Քոչարեան երկրի Փարիզէն Երեւան հասաւ: «Ջուրթոնգ» օդակայանին մէջ նախագահ Քոչարեան լրագրողներուն ըսաւ, որ

Քի Ռիէսթի մէջ բանակցութիւնները տեղի ունեցան այլ տարապոլ, այսինքն՝ Միւսթի խմբակի համապատասխանութիւնները կը կատարէր իւրաքանչիւր կողմին հետ: Ան ըսաւ, որ հայկական կողմը դրական կը գնահատէ իր կատարած քննարկումներուն արդիւնքները: Ան նշեց, որ համապատասխանութեան լատիտես յայտարարութեան հիմամբ կատարուած է Երեքշաբթի օր Շիրաք - Քոչարեան հանդիպումէն ետք:

Նախագահ Քոչարեան երկրի Փարիզէն Երեւան հասաւ: «Ջուրթոնգ» օդակայանին մէջ նախագահ Քոչարեան լրագրողներուն ըսաւ, որ

Շարք՝ էջ 10

### ԲԱՆԱԿԸ ԿԸ ՅԵՏԱԶԳԷ 19,5 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԻ 32 ԾՐԱԳԻՐՆԵՐ



Թուրք ոստիկանները վայրագ միջոցներու դիմեցին ցուցարարները ցրուելու համար:

Թուրքիոյ ուժեղ բանակը երկր յայտնած է, թէ 19,5 միլիարտ տոլար արժողութեամբ 32 ծրագիրներ յետաձգած է: Երկրին դիմագրութեամբ էլեւմտական տագնապը թեթեւեղելու համար:

Բանակը, որ ՕՊԱՍԻ երկրորդ մեծագոյնն է, կը ծրագրէ յառաջիկայ տասնամեակին միլիտարիզացիոն ծրագրերը ծախսել արդիականացման ծրագիրներու, որոնց կարգին 1000 հրասայներ եւ ռազմական 145 ուղղաթիռներ:

Քննադատներ այդ ծրագիրները անելորդ նկատած են տնտեսական տագնապի այս ժամանակաշրջանին: Տագնապին պատճառով իրան գրեթէ 50 առ հարիւրով արժեւրկուած է:

Թուրքիա ներկայիս կը փորձէ արտաքին աղբիւրներէ փոխատուութիւններ ապահովել եւ կան չհաստատուած տեղեկութիւններ, թէ Գ. Մ. Ֆոնտը պաշտպանութեան մարպիտ մէջ պիտոճեակ կրճատումներ պահանջած է՝ նախ քան որեւէ փոխատուութիւն կատարելը:

Թրքական բանակին կինոտրական 32 ծրագիրները յետաձգելու որոշումը կը յաջորդէ յունական մէկ քայլին՝ յետաձգելու «Թայֆուն» տիպի ռազմական 60 օդանավերու «Ենրոֆայթըր» ընկերութենէն գնումը:

Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ յարաբերութիւնները բարելաւուած են անցնող քանի մը

Շարք՝ էջ 10

### ԻՍՐԱՅԷԼ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԳԱՂԹԱԿԱՅԱՆ ՄԸ ՌՄԲԱԿՈՇԵՑ ԶՈՂԵՐ ԵՒ ՎԻՐԱԻՈՐՆԵՐ ՊԱՏՃԱՌԵԼՈՎ

Իսրայէլեան բանակին ու պաղեստինցիներուն միջեւ յարաբերութիւնը կը սրի եւ բախումները կը սաստկանան՝ բարձրացընելով գոհերուն ու վիրաւորներուն թիւը: Իսրայէլեան ուժերը երկու պաղեստինցի սպաննեցին Կազալի գաղթականներէն մէկուն զէմ կատարած յարձակումի մը ընթացքին:

Բանակին մէկ բանբերը յայտնեց, որ Խան Երանէսի գաղթականները ռմբակոծեցաւ, որովհետեւ հոնկէ կրակ բացուած է հրէական բնակեցման վայրի մը վրայ: Միջին Արեւելքի հարցերու ՄԱԿի մասնաւոր

պատուիրակը՝ Թերի Ռոտ Լարսըն զգուշացումի հրահրեց ուղղեց հակամարտ կողմերուն, դիտել տալով, որ զինուորական քայլերը լուծում չեն ներկայացնէր վեցամսեայ տաղանպին: Լարսըն ըսաւ, որ միայն քաղաքական միջոցառումները կրնան կասեցնել վայրագութեան ալիքը, որ կը սպառնայ հակակշիռէ

ղուրս գալ: Բանակին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը յայտնէր, որ իսրայէլացի զինուորները իրան Երանէս մտած են քանդելու համար բնակարաններ եւ ձիթենիի պարտէզ մը, ուր ապաստանած

էին զինեալներ կրակ բանալու համար հրէական բնակեցման վայրերու եւ զինուորներուն զէմ: Ականատեսներ յայտնեցին, որ իսրայէլացի զինուորներ՝ երկու հրասայլերու առջնորդութեամբ, Խան Երանէս մտան Երեքշաբթի կէս գիշերին, երբ գաղթականներն բնակչութեան մեծամասնութիւնը քնացած էր: Ձիթենիները՝ պուլտուրներու օժանդակութեամբ, քանդեցին եւ թաղարար զինեալներու ապաստան դարձած բնակարաններ: Աւելի քան 25 բնակարաններ հիմնայա

Շարք՝ էջ 10

### ՄԵՐԻԼԷՆՏ ՆԱՀԱՆԳԸ 24 ԱՊՐԻԼԸ ՀՌԶԱԿԵՅ «ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՄԱՆ ՕՐ»

Միացեալ Նահանգներու Մերիլենտ նահանգի Օրէնսդիր Մարմինը 9 Ապրիլին վաւերացուց բանաձէ մը, որուն համաձայն, նահանգին մէջ 24 Ապրիլը կը հռչակուի «Հայկական Յեղասպանութեան Մերիլենտի Յիշատակման Օր»:

Նախապէս հաղորդած էինք, որ նահանգին Ներկայացուցիչներու Տունը 5 Ապրիլին ժամանակաւորապէս վաւերացուցած էր յիշեալ բանաձէը: 6 Ապրիլի նիստին նահանգին Ներկայացուցիչներու Տունը 79 թեր 11 դէմ քուէներով վաւերացուց բանաձէը եւ պայն յղեց նահանգային ծերակոյտին, որ 9 Ապրիլին 32 թեր 12 դէմ քուէներով որդեգրեց բանաձէը:

Բանաձէը ներկայիս պիտի ստորագրուի նահանգապետին կողմէ, որպէսզի օրէնքի ուժ ստանայ: Մերիլենտի հայ համայնքի Հայկական Յեղասպանութեան ռգեկոչման յանձնախումբի համանահագահներ Արիս Մարտիրոսեան եւ Անի Թոթա շնորհակալութիւն

յայտնեցին նահանգի օրէնսդիր Իշխանութեան մէջ, որ այս քայլը շեշտուած պատու մըն է ուղղուած Թուրքիոյ, որ պէտք է հաշուի նստի իր անցեալին հետ:

Նախապէս 16 նահանգներ որդեգրած են նմանօրինակ բանաձէ մը: Անոնք են՝ Ալաբա, Քալիֆորնիա, ձորճիա, Իլլինոյ, Մէյն, Մէնչեսուս, Միչիգըն, Նիւ Համփշայր, Նիւ Ճըրզի, Նիւ Մեքսիքո, Նիւ Եորք, Փենսիլվանիա, Ռոտ Այլընտ, Սաութ Քարոլայնա, Վրճինիա եւ Ուիսքոնսին:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը նախապէս նամակ մը յղած էր Մերիլենտի օրէնսդիրներուն պուշացնելով անոնց արտաքին քաղաքականութեան վրայ բանաձէի որդեգրման ժխական հետեւանքներու մասին: Իսկ Մ. Նահանգներու մէջ Թուրքիոյ դեսպան Պաքի Իլքին Անափոլիս մեկնած էր համոզելու համար օրէնսդիրները, որ դէմ քուէարկեն բանաձէին:

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ Ի ՎԵՐՋՈՅ ՊԻՏԻ ԼՈՒԾՈՒԻ

Կ'ԸՍԷ ՌՈԿՈՉԻՆ

Ռուսիոյ Տումայի միջազգային հարցերու յանձնախումբի նախագահ Տիմոթի Ռոկոչին յայտնեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցը ի վերջոյ պիտի լուծուի, սակայն ատիկա հնարաւոր է միայն ռուսական խաղաղութեան շրջանակներուն մէջ:

Ռոկոչին ըսաւ, որ «Իռուսիա այդ շրջանին մէջ այլ կ'աշխատի պատասխանատուութեամբ՝ ամբողջովին կատարելով իր պարտականութիւնները, եւ հետեւաբար պիտի չհեռանայ Լեռնային Ղարաբաղին առնչուող հարցին լուծումէն»:

Ռուս պատգամաւորին համաձայն, Լեռնային Ղարաբաղի բանակցութիւններուն նոր միջնորդներու մասնակցութիւնը «միայն պիտի բարդացնէ իրապիճակը»: Ան ըսաւ, որ Քի Ռիէսթի մէջ Ազրպէյճանի եւ Հայաստանի նախագահներուն մասնակցութեամբ տեղի ունեցած բանակցութիւններու հերթական փուլը ապարդիւն աւարտ ունեցաւ:

Անդրադառնալով անյաղդօթեան պատճառներուն, Ռոկոչին ըսաւ, որ «սկզբնական պայմանները որոնց չուրէ նախապէս (միջնորդները) համաձայնած էին երկու կողմերուն հետ, տակաւին շատ կը տարբերին»: «Ակներեւ է, որ բանակցութիւններու ներկայ փուլին կողմերը հեռու են փոխադարձ զիջումներէ», ըսաւ ռուս պատգամաւորը:

(ԱՐՄԵՆՓԲԵՍ)

### ԱԼԻԷ ԱՂՐՊԵՅՅԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՎԵՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂՈ ՊԻՏԻ ՉՍՏՈՐԱԳՐԷ

Կ'ԸՍԷ ԱԼԵՍՔԵՐՈՎ

Արպէյճանի խորհրդարանի նախագահ Մուրթուկ Ալեքսեյով յայտնեց, որ նախագահ Հայտարարութիւնը չի ստորագրէր Արպէյճանի ապագային շահերուն վնասող որեւէ փաստաթուղթ: Խորհրդարանին մէջ Քի Ռիէսթի բանակցութիւններու արդիւնքներու քննարկումի մասին պատգամաւորի մը առաջարկին պատասխանելով Ալեքսեյով ըսաւ, որ նպատակայարմար չէ այդպիսի քննարկումներ կատարել, որովհետեւ այդ արդիւնքները զարտի կը պահուին:

Ալեքսեյովի համաձայն, երկու կողմերը համաձայնած են, որ պիտի մեր կատարեն, սակայն բոլոր քննարկումներուն հիմքը եղած է Արպէյճանի հողային ամբողջականութեան սկզբունքը: «Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարը անպատասխան ձևով է Լաւրայարձակ, մասնաւորաբար Շուշիի եւ Լաւրային առնչութեամբ եւ մեքսիքոնի պիտի մեր ակնկալելու Հայաստանէն», ըսաւ Արպէյճանի խորհրդարանի նախագահը:





### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ 33 ՀԱՉԱՐ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՒԱՆԴ

Հայաստանի մէջ ներկայիս կայ 33 հազար հոգեկան հիւանդ, որոնցմէ 1200 հոգի մնալուն հիւանդանոցային բուժման կ'ենթարկուի: Ասոնք գլխաւորաբար սքիզոֆրենիք են եւ ընկճուածութենէ կը տառապին:

Ըստ Երեւանի պետական բժշկական համալսարանի, հոգեբուժութեան եւ բժշկական հոգեբանութեան ամպիոնի վարիչ փրոֆ. Մարիթա Մելիք-Փայաջանի, հոգեկան հիւանդութիւնները հետեւանք են ընկերային-տնտեսական ծանր պայմաններու եւ ընտանեկան ողբերգութիւններու: Մարդիկ տարբեր ձեւով կ'արձագանգեն ճնշուածութեան իրավիճակներու: Անձնապանութեան դէպքերու 60 առ հարիւրին պատճառները ընկճուածութիւնն ու սքիզոֆրենիան են:

Ներկայիս Հայաստանի մէջ բաւարար չափով հոգեբուժներ չկան. յաճախ նաեւ բաւարար չեղ չկայ, իսկ հոգեբուժական հիւանդանոցին մէջ բուժումը բաւարար չէ:

### ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ԿԱՌՈՒՑՈՒՈՂ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Երեւանի մէջ կառուցուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած է դժբախտ պատահար մը: 8 Ապրիլին աշխատանքի պահուստ անդուստրիան պատճառով վար ինկած է երիտասարդ բանուոր մը եւ մահացած է:

### ԼԵԶՈՒՊ ԴԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՀՈԳ՝ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Հայաստանի կառավարութեան առնթին լեզուի պետական տեսչութիւնը յայտարարութեամբ մը յուրը մտահոգութիւններով յայտնեց վերջին տարիներուն մամուլին մէջ գրուող եւ յատկապէս հեռատեսիլին եւ ձայնասփիւռին հնչող մայրենի լեզուի մակարդակին մասին:

«Ամէնօրեայ սփռումներուն ընթացքին աղաւաղուած հայերէնով կ'արտայայտուին անհրաժեշտ պատրաստուածութիւն չունեցող լրագրողներն ու հարցրգայարները, իսկ լրատուամիջոցներու պատասխանատուները առ այսօր կ'անտեսեն այդ զծով եղած տարիներուն դժգոհութիւնները: Այդ բոլորին իրեն հետեւանք՝ մեր պետական լեզուն կը խեղաթիւրուի զանգուածային լրատուամիջոցներուն մէջ:»

Տեսչութեան կարծիքով, հայերէնը անտեսուած եւ արհամարհուած է եւ լրագրողներէն չի պահարգուած:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Սիրարփի Կիրիւնեացի մահուան առիթով, փոխան ծաղկեպակի Ս. Զառմաշի Մանգականց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները:  
Տէր եւ տիկին Միշել Զէյթունցեան 50,000 լ.՝, Նազարիան Էվէն-ճէլիքը 25,000 լ.՝, Անի Շուկուլեան 20,000 լ.՝, Սիմոն Թաշեան 50,000 լ.՝, Հրանուշ Մաճարեան 10,000 լ.՝, Հրայր Սաղթեան 50,000 լ.՝, Մարի Շըրէ 10 \$, Նիքոլայ Պասիլ 25,000 լ.՝, Եուսէֆ Մանուր 20,000 լ.՝, Ժորժ Պարդուստ 20,000 լ.՝, Անուարեան 10,000 լ.՝, Մարի եւ Վիքթոր Զընցաւ 75,000 լ.՝, Տէվէլեան ընտանիք 10,000 լ.՝, Աւետիս Զատուրեան 10 \$, Բաֆֆի Զատուրեան 20,000 լ.՝, Անդրանիկեան ընտանիք 30,000 լ.՝, Վահէ Օհանեան 50,000 լ.՝, Սեպուհ Թէքեան 30,000 լ.՝, Գրիգոր Նիկոլեան 10,000 լ.՝, Էլի Մապի 20,000 լ.՝, Թորոս Կիրիւնցեան 30,000 լ.՝, Փարլաբեան ըն-

հանջուի լեզուական անհրաժեշտ մակարդակ: Ըստ տեսչութեան, այս հարցը կարելի է դիւրութեամբ լուծել՝ յատուկ ուղղութիւններ տալով համապատասխան կառուցներու ղեկավարներուն եւ աշխատակիցներուն:

Լեզուի պետական տեսչութիւնը նկատի ունենալով, որ այս երեւոյթով

### 5 ՆՈՐ ՊԱՆԴՈՎ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

Ներկայիս Երեւանի մէջ գործող 15 պանդոկներ կրճաւ 2000 հոգի ընդունի: Ասոնց կողքին նաեւ կը կառուցուի 6 հիւանդոց պանդոկներ, որոնք տարեկան պատրաստ պիտի ըլլան եւ պիտի ապահովեն լրացուցիչ 500 տեղ:

Ասոնցմէ զատ, ըստ Երեւանի քաղաքապետարանի գլխաւոր ճարտարապետ Նարեկ Սարգսեանի, Երեւանի մէջ կը նախատեսուի կառուցել 5 պանդոկ եւս:

### 1700 ԱՄԵՐԿԱԿԱՆ ԱՌԻՈՒԿ

### ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՊՈՒ ՏԱՊԻՒ ՄԷՋ

4 Ապրիլին Ապու Տապիի Յունաց եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ «Կիրիլիա թանգարան»ի գանձերուն նուիրուած դասախօսութիւն մը, կազմակերպութեամբ տեղւոյն 1700 ամեակի յանձնախումբին:

1700 ամեակի յանձնախումբի ատենապետ Վահէ Երէջեան կատարեց ձեռնարկին բացումը ապա օրուան դասախօս եւ «Կիրիլիա թանգարան»ի տնօրէն Եփրեմ արք. Թապաղեան հանգամանօրէն ներկայացուց «Կիրիլիա թանգարան»ին պատմականը եւ անդրադարձաւ թանգարանին կողմէ իրագործուած եւ անդրադարձաւ ծրագիրներուն: «Թանգարանին մէջ զետեղուած են ժողովուրդի մը հոգեմտաւոր արժէքները:

Թանգարանը ժողովուրդի մը անցեալի ստեղծագործութեան եւ աշխարհի քաղաքակրթութեան բերած նպաստին կենդանի պատկերն է: Թանգարանը ժողովուրդի մը անցեալը ներկայիս կապող եւ ներկան ապագային բացող միակ վայրն է: Այդ գանձերը թէեւ կը ներկայացնեն Կիրիլիոյ հայոց հոգեմտաւոր արժէքները, սակայն անոնք հարուստութիւն են ոչ միայն Մեծի Տանն Կիրիլիոյ կաթողիկոսութեան՝ այլ՝ համայն աշխարհի, ըսաւ ան:

Ձեռնարկին ընթացքին ցուցադրուեցան նաեւ «Կիրիլիա թանգարան»ի գանձերը ներկայացնող սահմաններ:

### ԳԵՐՄԱՆԱՑԻ ԳՐՈՂԻ ՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՎԷՊԸ՝ ԴՈՒՍԵՐԷՆՈՎ

Վերջերս Մոսկուայի «Թեքս» հրատարակչութեան մէջ ռուսերէնով լոյս տեսած է գերմանացի գրող Էտկար Հիլթշերթի «Մահաճախի հեթանոս» վէպը, որ կը պատմէ 1915ի Հայկական Յեղատարածութեան մասին: Վէպին թարգմանութիւնը կատարած է Ալեքսանտր Ասլանեան:

Վէպը առջին անգամ հրատարակուած է 1989 թուականին: Գիրքը յառաջարանին մէջ ռուս հրատարակախօս Ալեքսանտր Պոլին կը գրէ, թէ պաշտօնական Թուրքիա եւ անոր հասարակական կարծիքը մինչեւ հիմա կը փորձեն «մոռնալ» աւելի քան մէկ միլիոն հայերու բնաջնջումը, ընդէլ այդ էջերը Թուրքիոյ պատմութեանն են 20րդ դարու յանցագործութիւններու պատմութեանն, բայց որքան ալ դիմադրէ Անգարան, այս ահաւոր իրադարձութիւններուն մասին ճշմարտութիւնը դուրս պիտի գայ պատմութեան ընդլայնակէն: Յայտնենք, որ վէպը տակաւին հայերէնի չէ թարգմանուած:

### ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ՄԸ՝ ՆՈՊԷԼԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի փիլիսոփայութեան եւ իրաւունքի հիմնարկի աշխատակից, Գոյատեւման եւ զարգացման ռազմավարութիւններու ստեղծման աջակցութեան միջազգային ընկերութեան նախագահ, դոկտ. Էդուարդ Մարգարեան իրադրութեան նոպէլեան մրցանակի թեկնածու առաջարկուեցաւ:

Անոր թեկնածութիւնը ներկայացուց Ազգային մշակութաբանական հետազոտութիւններու կեդրոնը, որ իր դիմումին մէջ Մարգարեանի թեկնածութիւնը հիմնաւորեց «խղիղութեան եւ ուղղամտութեան, մարդասիրական ուղղութեան գիտական հետազոտութիւններու մարզին մէջ անոր ունեցած բացառիկ աւանդին համար»:

Ի. Մարգարեանի աշխատութիւնները մեծ հետաքրքրութիւն ստեղծած են միջազգային կազմակերպութիւններու մօտ՝ ՄԱԿ, Համաշխարհային Դրամատուն եւ այլն:

Այս առիթով թեկնածուն մամուլին բացատրեց, թէ իր հետազոտութիւններուն հիմնական զաղափարը կը վերաբերի համաշխարհային ընդհանուր ճգնաժամի յաղթահարման եւ «Աշխարհի Մշակոյթ»ի ստեղծման որոնումին, որ անկարելի է իրականացնել գոյութիւն ունեցող համաճգնաժամային ծրագիրներով, որովհետեւ, ըստ գիտնականին, անոնք «ոչ թէ հիւանդութիւնը կը բուժեն, այլ՝ արտանշանները»:

Յայտնենք, թէ Ի. Մարգարեան 14 գիրքերու եւ բազմաթիւ գիտական հրատարակութիւններու հեղինակ է: Խաղաղութեան նոպէլեան կոմիտէին կը հաղորդէ, թէ ընդունած է Մարգարեանի թեկնածութեան փաստաթուղթերը եւ պիտի քննարկէ գանձը:

EDOX  
SWISS MADE  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ  
Հեռ. 01-260889 եւ 01-265070  
ՀԱՄԱԿԱՍՏԱՆԻ ՀԱՍՅԵՆ  
HAMPIG SASSOUNIAN C - 88440  
CSP - L.A.C. D - 5 - 232 44750  
60-TH ST. WEST LANCASTER,  
CA, 93536 — USA

### ԽԵՂԱԿԱՏԱԿՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Երգիծանքը արուեստ մըն է՝ արտայայտուած գրականութեան առանձնակի սեռով, թատրոնով, գծանկարչութեամբ եւ նոյնիսկ երաժշտութեամբ: Թատրական մարդին մէջ երգիծանքը, պատկերը իր իրադարձութիւնը ունեցած է, նպատակ ունենալով մարդկային ընկերութեան մէջ տեսնուած թերիւնները մատնանշելու, աչնի ու պարկէշտ տրամադրութեամբ սրբազրէյու թերութիւններ, մոլորութիւններ կամ ծիսական, յոռի երեւոյթներ: Համայն քաղաքակիրթ աշխարհին մէջ ընդունուած է գնահատուած արտայայտութիւն մըն է երգիծանքը:

Հայ գրականութիւնը իր արեւմտեան թելին մէջ վերջին դարուն ընթացքին ունեցած է երգիծաբաններ, որոնք գնահատուած են ժողովուրդէն, եւ որոնց անունները ցարդ կը յիշուին եւ պիտի յիշուին գալիք սերունդներուն կողմէ:

Ինչ կը վերաբերի ներկայ ժամանակներուն երգիծանք փորձող կամ հայ թատրոնէն ներս պատկերային տրամադրութիւն ստեղծելու համար ձայնային մեր բեմադրիչներուն եւ դերասաններուն, անոնք անտեսած են արուեստը եւ ունին մէկ նպատակ՝ «ժողովուրդը խնայցնել» առանց միջոցներուն միջեւ խտրութիւն դնելու:

Ժողովուրդը ուրախ է պուրթ պահելու համար թատրոնին միջոցով անհրաժեշտ է հիւմորը՝ արամտութիւնը, իմաստուն պուրթախոհութիւնը, որ մտածել կու տայ հանդիսականին, նոյն ատեն պայն պուրթացնելով կամ անոր մօտ պուրթութեան փիլիսոփայութիւն մշակելով:

Մեր օրերուն, վերջին շրջապատին հիւմորը ընթացքին յաճախ ներկայ եղած ենք թատրական անիմաստ, խեղկատակութեան մակարդակով «խնդրի երեկոներու», որոնք այդքան ալ շատ խնդրեց չպատճառեցին:

Մենք ընդհանրապէս լուռ անցած ենք փողոցային մակարդակի «պատկերային երեկոներուն» վրայէն, եղած ենք հանդուրժող: Բայց կը թուի, թէ սխալած ենք մեր լուրթեամբ, ու այս պատկերացումները, նոյնիսկ առանց որոշ գրականութիւն մը մշակած ըլլալու, բեմ կը հանեն շտրիպի թէ անշտրիպ դերակատարներ, ասոր անոր քթին խլիպալու, ծաղրելու, գետնէ գետին պարնելու, եւ այդ հոգեբանութեամբ թատրական խնճոյք սարքելու:

«Մեղունքու խումբ» կոչուած «թատրոնի փոխանները» բաւական դասեր տուին մեր ժողովուրդին, մեծին ու փոքրին: Անոնց համար մեր գաղութին մէջ դրական ոչ մէկ աշխատանք կամ երեւոյթ կայ: Անոնք կը ծաղրեն նոյնիսկ դրական իրազդածուններ, պոքր կը տեսնենք մեր շուրջը հայկական թաղամասերու մէջ: Իսկ մեր թաղերուն մօտ շրջաններուն մէջ տեսնուած ծիսական բոլորիս համար անհաճոյ երեւոյթներ կը վերաբերեն գաղութին պատասխանատու կառոյցներուն եւ անձնաւորութիւններուն, կարծէք այս երկրին մէջ պետական ծրագրաւորում չկայ, ու քաղաքը տակն ու վրայ ընդդէմը մենք ենք:

«Ո՞ւր էինք, ո՞ւր հասանք» որակումով վերջին երկու շաբաթներուն բեմադրուած թատերախաղերը ուղղակի վիրաւորանք մը եղան մեր բազմաշաբաթ գաղութին բոլոր խաւերուն համար:

«Տայտայտ», գոհեկութիւն, փողոցային խօսակցութիւն եւ՝ ուրիշ ոչինչ: Բամբասանք, պրպարտութիւն, պոպոկ յանցանք մը խոշորացոյցով դիտելու եւ լուրջ հարցերը վտանգաւոր բաներով որակելու վարպետութեամբ պիտուած ըլլալու գիտնականներուն ալ կ'ապրին դերասանները:

Ի՞նչ է մեր նպատակը, «Մեղունքու խումբ»: Մեր գաղութը ծաղրել-նուստացնել: Լիբանանի սիրտը կոչուած մեր հայկական թաղերն ու արուեստի թէ մշակոյթի մարքերուն մէջ այնքան յառաջադէմ մեր գաղութը առ ոչինչ նկատել: Զէ՛ք յաջողիք:

Այս ընթացքով «մեղունքու» խաղերը կը հասնի միայն վարկաբեկումի այն աստիճանին, պոր կարելի է կոչել բարոյական ինքնասպանութիւն: Հանգիստ ձգեցէք մեր գաղութը իր Պուրճ Համուտով եւ հայկական այլ շրջաններով:

Յաւով գրեցինք այս տողերը, ցաւելով թատրական արուեստը գետնաքարք մակարդակի տանող այս տխուր իրողութեան համար:

al-mashrek  
INSURANCE & REINSURANCE S.A.L.  
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.  
(01)258228 – (01)268808  
Fax: (01) 258223

«ԱՉԳԱԿ»-Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ  
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:  
ՄԱՀԱՉԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:



# Հիբանանեան Մամուլ

## ԼԻԲԱՆԱՆ ԳՐԱՒ ԿԸ ԳՆԷ ՖՐԱՆՍԱԿԻՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ ՎՐԱՅ՝ ԻՐ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՇԽՈՒԹԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Քաղաքական աղբիւրներ կը նախատեսեն, որ եկող հանգրուանին ընդլայնի եւրոպական ապրեցութիւնը: Անոնք նաեւ կը նախատեսեն, որ այս ապրեցութիւնը արտաշայտուի քաղաքական, տնտեսական, մշակութային եւ ընկերային բազմաթիւ ձեւերով, սակայն՝ մէկ բովանդակութեամբ՝ եւրոպական - իբրանանեան եւ եւրոպական - շրջանային շահերու ընդլայնում:

Այս շրջագիծին մէջ այս աղբիւրները կը նկատեն, որ եկող հանգրուանին կարեւորութիւնը կը կայանայ հասարակաց հետաքրքրութիւն ներկայացնող բոլոր հարցերը քննարկելու եւրոպական - իբրանանեան եւ եւրոպական - արաբական պատրաստութեան մէջ: Ասիկա հանգրուանային կերպով կ'առաջնորդէ հասարակաց շահերու դրսևորման բարձրագոյն ձեւին եւ տնտեսական ու քաղաքական գետններու վրայ այդ շահերու պաշտպանութեան, մասնաւոր՝ միջազգային թատերաբեմին վրայ, «համաշխարհայնացման» նոր ելքին սահմանման շրջագիծին մէջ:

Այս աղբիւրները կը մատնանշեն յառաջիկայ Հոկտեմբերին Լիբանանի մէջ կայանալիք ֆրանսախօս երկիրներու համագումարին նախապատրաստական աշխատանքներուն առաջնահերթութիւնը: Համագումարին Լիբանանի մէջ կայացումը կարելիութիւն կ'ընձեռէ Լիբանանի եւ ամբողջութեամբ կամ մասնակիօրէն ֆրանսախօս երկիրներուն միջեւ համագործակցութիւնը ընդլայնելու:

Աղբիւրները ուշադրութիւն կը հրաւիրեն այն կէտին վրայ, որ իբրանանեան կառավարութիւնը այս իրադրութեան կը նայի ոչ միայն Լիբանանի ներկայիս լացած տնտեսական կեանքը վերաշխուժացնելու նախատեսութեամբ, այլ նաեւ՝ ուրիշ տեսանկիւններով, որոնցմով նոր շուկաներ պիտի բացուին իբրանանեան դրամագլուխներուն առջեւ:

Այս աղբիւրները չեն բացառեր հաւանականութիւնը շրջանային թատերաբեմին վրայ նոր պարագայումներու երեւան գալուն, պարզապէս մտնել, որոնք բոլորն ալ կը յանգին Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի վերակազմման կարելիութիւնները նկատի առնող քաղաքական մթնոլորտի մը ստեղծման, այնպիսի ձեւով մը, որ Լիբանան շահաւոր ըլլայ, մասնաւոր՝ ֆրանսախօս երկիրներու գործարարներուն իբրանանեան կառավարութեան ներկայացուցած ծրագիրներուն ընդառաջելու տեսակէտէն:

Ասոր կողքին, այս աղբիւրները կը յայտնեն, որ նկատի պէտք է ունենալ նաեւ, որ այս բոլորը կրնան առաջնորդել մրցակցութեան հրահրման, ֆրանսախօս երկիրներու եւ ամբողջութեամբ կամ մասնակիօրէն անգլիախօս երկիրներու միջեւ, որովհետեւ այդ երկիրներու գործարարները կը ձգտին ներդրումային շուկաներուն՝ ներառեալ իբրանանեան շուկան:

Անոնք իբրանանեան շուկային կը նային այն տեսանկիւնէն, որ ան կը նկատուի բանայի մը բազմաթիւ արաբական շուկաներու մէջ ներդրում կատարելու, ինչպէս նաեւ անոնք քաղաքական ապրանքներ կը ներկայացնեն ներդրողներուն համար, ինչ քաղաքացիութեան ալ պատկանին անոնք:

Այս ծիրին մէջ այս աղբիւրները իրենց հաշիւներէն չեն հաներ այն, որ օտար դրամատէրները մտահոգ են Լիբանանի եւ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ կայունութեան առնչութեամբ: Աղբիւրները կը նշեն, որ գործարարները տարբերութիւն չեն դնել այս շրջանին գծով միջազգային քաղաքական ծրագիրներուն եւ այս շրջանի ներկայ տնտեսական կացութեան միջեւ, մէկնելով այն միտքէն, որ այս կացութիւնը լայն քաղաքական նպատակներու լուծման դուռը բանայ:

Այս կացութիւնը կը ծառայէ նաեւ իբրեւ շրջանի երկիրներու ղեկավարութեանց վրայ իրազործող ճնշման միջոց՝ ըսելով, որ այդ երկիրներուն առջեւ ցցուած տնտեսական տագնապներէն դուրս գալու ուրիշ ելք չկայ, բացի եթէ անոնք յառաջխաղացք արձանագրեն խաղաղութեան գործընթացին մէջ:

Ասոր վրայ կառավարական աղբիւրներ կ'ըսեն, որ կայանալիք համագումարի իբրանանեան պատրաստութիւնները կը մէկնին վերոյիշեալ իրական տնտեսականներէն, որոնք Լիբանանը կը պատրաստեն մասնակցելու որեւէ առանցքային բանակցութիւններու: Լիբանան վստահ է, որ սպասուող լուծումները չըլլան իր հաշուոյն. արդէօք սահկա տեղի պիտի ունենայ:

ԺՈՐԺ ՍԱԼԻՊԱ

«Անուար»

# ՍՈՒՐԻԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՇՈՒՐԶ ԲԱԺՆՈՒՈՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ ՀԱՆԴԱՐՏԵՑՈՒՄԷՆ ԵՏՔ ԵՐԿԻՍՕՍՈՒԹԻՒՆ ԹԱԷՖԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՄՆԱՑԵԱԼ ԿԷՏԵՐԸ ԳՈՐԾԱԳԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սուրիական զինուորական ներկայութեան շուրջ լիբանանցիներուն բաժանումը իր գաղափարակէտին հասնելէ եւ այդ բաժանման մէջ այս ներկայութեան կողմնակիցներուն եւ հակահակողներուն միջեւ հաւասարութիւն հաստատուելէ ետք, միջոգրդները սկսան իրենց կապերը հաստատել լարուած կացութիւնը հանդարտեցնելու եւ իր բնական հուճերին վերադարձնելու համար, որովհետեւ ոչ չըջանային եւ միջազգային իրավիճակը թոյլ տուէր շարունակելու լարուածութիւնը եւ սուսանալու ոչ ալ տնտեսական, էլեմտական եւ ապրուստի վիճակը կը դիմանայ այս կացութեան շարունակութեան:

Միջոգրդները կ'երթան Պրեքէ, որպէսզի ան օգնէ կացութեան հանդարտեցման: Այս գծով Ծաղկազարդին պատրիարք Սֆէյրի քրիստոնեայ-խլամ համակցութեան կողմնակից քարոզը եւ քաղաքական հարցերուն ուղղորդումը այս միջոգրդներէն անջատու չի կրնար շարժուել պիտի ուղղեն դէպի Տար էլ Ֆատուա եւ պաշտօնական ու ոչ պաշտօնական կողմեր:

Երբ միջոգրդները կը յանգին երկրին լարուած կացութեան հանդարտեցման եւ բնականօրէն վիճակին վերադարձին, կարելի կ'ըլլայ ուսումնասիրել երկխօսութեան դուրսեր բանալու հարցը՝ փոփոխ շարժման եւ երկիրը պատակուածի հասցնող պատճառներու լուծման համար:

Միջոգրդներէն ոմանք կը նկատեն, որ պէտք է նոր առիթ տրուի այն շարժումին, որ նախկին նախարար Ֆուադ Պուլթրուս պիտի վերադառնար լիբանանցիներու կողմնակցութեան մէջ գոյություն ունեցող թեքութիւնը ջնջելու եւ այս գծով նախագահ Պաշար Ասատի հետ համաձայնութեան մը յանգնելու ծամար:

Պէտք է հանդարտ միջնորդող մը ստեղծել Պուլթրուսի կատարած շարժումին համար եւ սպասել անոր արդիւնքներուն: Պրեքէ նախկին նախարարի մտքով միջոգրդներէն ընթացքին պահեց իր լուծութիւնը՝ իր պատրաստակամութիւնը յայտնելով անոր պատու նոր առիթ մը, այն ակնկալիքով, որ հանդարտ միջնորդող մը մէջ անոր շարժումին վերակերպումը երկրի ներքին յարաբերութիւններուն միացեալ պատկերացում մը ստեղծելու կը յանգի եւ այս պատկերացումը կրնայ ծառայել իբրեւ հիմք՝ պատասխանատու կողմերուն միջեւ երկխօսութեան համար:

Պէտք է նաեւ Յովհաննէս - Պողոս Բ. պապին Դամասկոս այցելութեան նախորեակին հանդարտութեան միջնորդող մը ապահովելու այս այցելութիւնը կրնայ առիթ մը ըլլալ

քննարկելու լիբանանցիներու կողմից լարուածութեան պատճառները եւ այս յարաբերութիւններուն մէջ գոյություն ունեցող հարցերուն լուծումը:

Ըստ կարգ մը տեղեկութիւններու, վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ այս ամսուան վերջաւորութեան վատիկան կ'այցելէ, վատիկանի բարձրաստիճան պաշտօնատարներուն պիտի ներկայացնէ իր պատկերացումը Լիբանանի իրավիճակին, Լիբանան եւ իբրանանեան յարաբերութիւններու եւ հետեւաբար լիբանանցիներու կողմից պապին Դամասկոս տարիք այցելութեան առիթով:

Իրականութիւնը այն է, որ պատրիարք Սֆէյր եթէ կառչած կը մնար գերիշխանութեան, անկախութեան եւ ազգային ազատ ոգով պահպանող, ասիկա չի նշանակել, թէ ան կ'ուզէ հակահակել եւ թշնամանալ Սուրիոյ հետ, կամ որեւէ իրաւ լիբանանցի տարբեր կարծիք չունենայ այս հարցին գծով:

Երբ ան կը պահանջէ գերիշխանութիւնը եւ ազատ ոգով, բնական է, որ բոլոր լիբանանցիները հաւատան գերիշխանութեան եւ անկախութեան, եւ այս հաւատքին մէջ ծայրայեղականներ եւ չափաւորականներ չկան, այլ պէտք է բոլորն ալ ծայրայեղ ըլլան իրենց այս հաւատքին մէջ:

Թաէֆի համաձայնութեան պատրաստութեան մէջ իր հիմնական դերակատարութիւնը ունեցած պատրիարք Սֆէյրի իրաւունքն է յանձնառու ըլլալ անոր իրագործման՝ մասնաւորապէս եւ ամբողջական կերպով: Ասոր համար ալ անհրաժեշտ է, որ երկիրը իր վիճակին վերադառնայ հակամարտող կողմերու հաւասարութեան ետք: Անհրաժեշտ է նաեւ նախկին նախարար Ֆուադ Պուլթրուսի շարժումին Յովհաննէս-Պողոս Բ. պապին Դամասկոս այցելութեան եւ Զատկուան առիթով նախագահ էմիլ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրի պատրիարք Սֆէյրին շնորհաւորական այցելութեան արդիւնքներուն սպասել, որովհետեւ միայն երկխօսութեան լեզուն է, եւ ոչ փոփոխի լեզուն, որ վիճարկող հարցերու շուրջ հասարակաց գիծերու ստեղծումը կարելի կը դարձնէ:

Համայնքային բաժանման եւ լարուածութեան շարունակութիւնը ոչ մէկուհեւ շահ կը բերէ բացի Իսրայէլէն, որովհետեւ ան այն ձեւով կ'ազատի դիմադրութեան եւ լիբանանցիներուն իր դէմ ցուցաբերած համբաշխութեան, երբ անոնք կը զբաղին իրենց ներքին հարցերով: Միացեալ, ամբողջ եւ գորակար Լիբանանը ինքն էր, որ իսրայէլացիները հեռա-

ցուց գրաւեալ հողերէն, եւ երբ Լիբանան կը բաժնուի ինքն իր մէջ, առիթ կը տրուի, որ բոլոր կողմերէն մարդիկ միջամտեն իր ներքին հարցերուն:

Հանդարտեցումէն ետք պէտք է սկսի երկխօսութիւնը թաէֆի համաձայնութեան մասնաւորապէս եւ ամբողջական իրագործման շուրջ, եւ ասիկա պէտք է հետապնդեն համաձայնութեան ստեղծման մէջ իրենց դերակատարութիւնը ունեցած անձնաւորութիւնները, եւ ոչ միայն՝ պատրիարք Սֆէյրը:

Եթէ սուրիական ուժերու Լիբանանէն հեռացումը ներկայ տեղական եւ ներքին պայմաններուն մէջ կարելի չէ իրագործել, ապա այդ ուժերուն վերադասաւորման եւ վերակերպումիցման անհրաժեշտութիւնը կը բխի նոյնիսկ այս պայմաններէն, որովհետեւ թաէֆի համաձայնագիրը ինք խօսեցաւ ասոր մասին:

Սուրիական ուժերու վերադասաւորման շուրջ լրատուական միջոցներէն հեռու հանդարտ երկխօսութիւնը կը ջնջէ լարուածութեան պատճառները եւ կը յետաձգէ ամբողջական հեռացումը, մինչեւ որ տեղական եւ շրջանային պայմանները անոր առիթը ստեղծեն:

Երբ կացութիւնը հանդարտի եւ երկխօսութիւնը սկսի լիբանանեան եւ սուրիական կառավարութիւններուն միջեւ երկու երկիրներուն յարաբերութիւնները ամբողջական եւ բարելաւելու գծով, կարելիութիւնը կը ստեղծուի շարունակելու վերադասաւորման գործընթացը, որ սկսած կը անցնայ տարուան Ապրիլին:

Այդ գործընթացի իրականացումէն ետք, լիբանանեան կառավարութիւնը պէտք է սկսի գործադրել թաէֆի համաձայնագրի տակաւին չգործադրուած յոդուածները, եւ մասնաւորապէս ազգային մարմինի մը ստեղծումը, որուն նպատակը ըլլայ համայնքային դրութեան ջնջման միջոցներու ուսումնասիրութիւնը ու առաջադրումը, վարչական ապակերպումիցման օրէնքի նախագիծի վաւերացումը, երեսփոխանական ընտրութիւններու արդար եւ հաւասար օրէնքի մը առաջադրումը, օրէնք մը, որ քաղաքական ներկայացուցչութեան առողջութիւնը կ'ապահովէ ժողովուրդի բոլոր հատուածներուն եւ ապահովական ծրագիր մը դնել, որուն նպատակը ըլլայ լիբանանեան պետութեան գերիշխանութիւնը հաստատել Լիբանանի բոլոր հողերուն վրայ լիբանանեան ուժերուն միջոցով:

ԼԵՄԷԼ ԽՈՒՐԻ

«Նախար»

## ՏԱՐԹԵՐ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ...

Շարունակուած՝ Տրո ԷԶԵԳ

Նման ժողովուրդներ հնարաւորութիւն է տալիս պետութեանն ուժեղացնել աղբիւրները արտասահմանում, օգուտ քաղել իր արտագաղթած քաղաքացիներէ գործունէութիւնից եւ փորձից, որոնք կարող են որոշակի առուկարող են իրենց քաղաքացիութիւնը շնորհել արդէն իսկ այլ երկրի քաղաքացիութիւնը ունեցող իրենց հայրենակիցներին, միաժամանակ իրենց տարածքում պաշարելով երկաթաքարացիութեան դէմ՝ դրանով իսկ չէզոքացնելով հարեւան հզօր պետութիւններէ կողմից «սպառնացող» վտանգը: Այս ձեւով է շարժուած Զուլիգեթիան, այն օգտագործում են Յունաստանը, Նորուեթիան, Սլովենիան:

Երկաթաքարացիութիւնը ճանաչուած է իրենց պետութեան տարածքը հարկադիր լքած եւ օտարերկրեաց պետութիւններում բնակուող հայրենակիցներին համար:

Այսպիսի ձեւի օրինակ կարող է ծառայել Ղազախստանը, որն իր քաղաքացիներէ համար չի ճանաչում երկաթաքարացիութիւնը՝ բացառութեամբ միջպետական պայմանագրով նախատեսուած դէպքերի, սակայն իրաւունք է վերապահում այլ պետութիւններում բնակուող ընդհանուր ղազախներին, ովքեր հարկադրուած են եղել լքել իրենց հայրենիքը, ներկայ քաղաքացիութեան հետ մէկտեղ ձեռք բերել նաեւ Ղազախստանի քաղաքացիութիւն, եթէ զա չի հակասում այն պետութիւններէ օրէնքներին, որոնք քաղաքացիները նրանք հանդիսանում են: Աւելին. պետութիւնը պայմաններ է ստեղծում զանգուածային հալածանքներէ, բռնի համայնացման, այլ հակամարդկային քաղաքական գործողութիւններէ հետեւանքով հանրապետութեան տարածքը լքած անձանց եւ նրանց սերունդներին, ինչպէս նաեւ նախկին միութեակական հանրապետութիւններէ տարածքում բնակուող ղա-


զախներէ վերադարձի համար:

Երկաթաքարացիութիւնը ճանաչուած է միայն բացառիկ դէպքերում:

Այսպիսի ձեւի օրինակ կարող է ծառայել Լիթվանիան, որը չճանաչելով իր քաղաքացիութեան հետ միաժամանակ այլ երկրի քաղաքացիութիւն, բացառութիւն է անում այն օտարերկրացիներին համար, որոնք Լիթվայի համար մեծ վաստակ են ունեցել եւ երկրի նախագահի կողմից կարող է տրուել Լիթվայի քաղաքացիութիւն: Մի փոքր այլ ձեւով է զա կատարուած Ուկրաինայի համար, որը նոյնպէս իր քաղաքացի հանդիսացող անձին համար չճանաչելով այլ պետութեան քաղաքացիութիւնը, բացառութեան կարգով թոյլատրուած է ընդունել նաեւ Ուկրաինայի քաղաքացիութեան հանրապետական քաղաքացիութեան նախագահի կողմից ընդունելու:

կին ստիպուած են եղել լքել իրենց հայրենիքը՝ կապուած այն ժամանակ գոյություն ունեցող վարչաձեւի հետ: Ընդ որում, որոշումը կայացուած է Ուկրաինայի համար պետութեան նախագահի կողմից, հաշուի առնելով Գերագոյն խորհրդի յատուկ պատգամաւորական յանձնարարութիւնը եզրակացութիւնը:

«Հայոց Աշխարհ»



**ՈՏԵԼՈՒԱՅԻ ՀԱՆԳԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՅ ՄԵՋ**


Աւագ Գինգաբքի, 12 Ապրիլ 2001, կտսօր ետք ժամը 4:00ից:  
Սրբազան արարողութիւնը պիտի կատարուի պիտի քարոզէ՝

ԳԵՐՊ. Տ. ԾԱՆԱՆ Ծ. ՎՐԻ. ՍԱՐԳԻՍԵԱՆ (Տեսուչ դպրեւանքի)

Կը հրակիրուի բոլոր հայ մանուկներն ու ծնողները, մասնակցելու այս հոգեպարար արարողութեան:

**ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՅ**

«Անուար»



# Կնոջական

## ՄԵՐ ՉԱԻԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

### ՀԱԻ ԽՐԱՏՆԵՐԸ ՇԱՏ ՅԱՃԱԽ... ՍԽԱԼ ԵՆ

«Անփորձ» մայրերուն խրատ տուողները շատ են: Բարեկամուհիներ, դրացուհիներ, ազգականներ, մայր եւ կեսուր... իրաքանչիւրը պարտաւորուած կը զգայ խրատ մը տալու:



Երիտասարդ եւ անփորձ մայր մը, շուրջինները ստիկ ընելէ աւելի, հնքն իր կարողութիւններուն եւ ժամանակի ընթացքին ձեռք բերելիք փորձառութեան պէտք է վստահի, որովհետեւ ոչ ոք աւելի լաւ կրնայ ճանչնալ իր զաւակը, քան մայրը:

Ահաւասիկ՝ 5 սխալ կարծիքներ, որոնք սերունդէ սերունդ կը փոխանցուին եւ ժամանակն է, որ ձերբազատիք անոնցմէ:

- 1 -

Երեխան երբեք չգրկել, հետագային շփացած կը դառնայ եւ ինքնավստահ չ'ըլլար:

Մասնագէտներու կարծիքով, սխալ է այս մէկը: Երեխան թեւերուն մէջ առնելը, գրկելը հաղորդակցութեան լաւագոյն միջոցն է մօր եւ երեխային համար:

Իսկ եթէ խօսքը կը վերաբերի ամբողջ օրը երեխան գրկելու եւ օրօրելու մասին, կասկած չկայ, որ երեխային ոչ միայն բարիք չենք գործեր, այլ ընդհակառակը՝ կը քաշալերենք, որ շփանայ, ինքզինք պարտադրէ, չքնանայ եւ շուրջիններն ալ հետը արթուն պահէ:

- 2 -

Կէտք է ձգել, որ երեխան լայ, այդպէսով թոքերը աւել կազմուին:

Երբեք: Երբ երեխայ մը կու լայ, ան բան մը ըսելու հասկցնել կ'ուզէ եւ լացը հաղորդակցութեան միակ միջոցն է:

Ժամանակի ընթացքին մայր մը կը սկսի ճանչնալ

իր զակին լացի զանազան եղանակները եւ զանազան գաւի ու անհանգստութեան լացը՝ շփացածութեան լացէն:

- 3 -

Երեխան օրական պէտք է լոգցնել:

Երբ օրական, ամէն առտու կը լուանք եւ կը մաքրենք երեխան, օրական լոգանքը անհրաժեշտ չէ, կը պնդեն մանկաբույժները:

Սկզբնական շրջանին օրական մանրամասն եւ բժայկոյի մաքրութիւն մը կրնայ զանց առնել լոգանքը:

- 4 -

Երեք ամսուան երեխան գիշերը պէտք չէ արթննալ:

Հազուադէպ են այն երեխաները, որոնք 3 ամսու են եւ արդէն իսկ ամբողջ գիշերը կը քնանան: Առհասարակ մինչեւ 8 ամիս անոնց ստամոքսը այնքան փոքր է, որ ամբողջ գիշերուան մը ուտելիքը չի կրնար ամբարել եւ հետեւաբար կ'արթննայ անօթութեան պատճառով: Բացի ասկէ, երեխաները կ'արթննան, որովհետեւ իրենց տակը թրջած են կամ կը մտնեն կամ կը տաքնան կամ ալ ակոյալ կը հանեն:

- 5 -

Երեխան պէտք է կերակրել 4 ժամ անգամ մը:

Սխալ: Ներկայիս սննդագէտները կը մերժեն ժամերով եւ ժամերով սահմանել անոնցներու սննդառութիւնը: Անոնք կ'առաջարկեն, որ երեխային օրական կշռոյթին հետեւին մայրերը եւ ի հարկին աւելի յաճախ կամ աւելի հեռուոր ժամերով կերակրեն զանոնք:

Սննդագէտներուն կարծիքով, պէտք է կերակրել, երբ երեխան անօթութեան նշաններ ցոյց տայ, առանց հիմնուելու նշուած ժամանակացոյցերու վրայ:

## ՄԵՂՄ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ


### ՄԱՏՆԵՐՈՒ ԵՈԿԱՆ

Եոկայի փրոֆեսոր Ժերթիտ Հըրշիի կարծիքով, շատ մը հիւանդութեանց պատճառը լարուածութիւնն է: Փրոֆ. Հըրշի մատներու եոկայի ճամբով յաջողած է կարելու տոկոսով մը դարմանել կարգ մը ֆիզիքական եւ հոգեկան անհանգստութիւններ:

օրական 4 անգամ, կռնակի ցաւեր մեղմացնելու համար:




●**Թի 4 նկար**  
Շարժումը կատարել 7 վայրկեան. օրական 4 անգամ, գերզգայնութիւնները արգիլելու համար:



●**Թի 2 նկար**  
Շարժումը կատարել քառորդ ժամ, օրական 3 անգամ, կոկորդի ցաւը չեզոքացնելու համար:

●**Թի 5 նկար**  
Շարժումը կատարել քառորդ ժամ, օրական 3 անգամ, ակոյալի ցաւ եւ այլ խանգարումներ դարմանելու համար:



●**Թի 6 նկար**  
Շարժումը կատարել 6 վայրկեան. օրական 3 անգամ, գլխու ցաւը մեղմացնելու համար:

●**Թի 3 նկար**  
Շարժումը կատարել 4 վայրկեան,


## ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

### ՈՐՔԱՆՈ՞Վ ՃԻՇԴ ԵՆ ԻՐԵՆՅ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Ժողովուրդին կողմէ կարգ մը ուտելիքներու վերագրուած են անհամար բարիքներ, արդեօք որքանո՞վ ճիշդ են այդ ուտելիքներուն վերագրուած արժանիքները...


#### ԳԻՆԻՆ ՕԳՏԱԿԱՐ Ե ՄԵՐ ՄՐՏԻՆ

Ճիշդ է, որ գինին օգտակար է մեր սրտին, պայմանաւ որ կիները մէկը



մանաւ որ անոր սպառումը ըլլայ շատ եւ հետեւողական ձեւով:

Միւս կողմէ, օրական պէտք մը սխտոր ուտելով կ'աշխուժացնենք մեր մարմինն զիմադրական դրութիւնը՝ կանխարգիլելով քաղցկեղի որոշ տեսակներ:




#### ԱՊՈՒՐԸ Կ'ՕԳՆԵ ՄԱՐՄԱՆ ԵՆ

Իրաժանցի աւելի չխմեն իւրաքանչիւր ժամի հետ, իսկ այրերը՝ երկու բաժակ:

Այս չափերէն անդին գինին հակառակ ազդեցութիւն կրնայ գործել, չափազանցութեան պարագային անիկա մինչեւ իսկ լեարդի քաղցկեղ կրնայ պատճառել: Չմոռնանք, որ կարմիր գինին կը վերագրուի վերոյիշեալ արժանիքը:

#### ՍԽՏՈՐԸ ԿԸ ԲԱՐԵԼԱԵ ԱՐԵԱՆ ԵՐԶԱԳԱՅՈՒԹԻՒՆԸ

Գիտութիւնը կը հաստատէ, թէ սխտորը կը պակսեցնէ գէշ քոլեսթերոլը եւ կը նպաստէ ար-



բան նօսրացումին, պայ-

ֆիլուր, իտտ, մակնեղիմ,

## ԽՈՂԱԳԻՐ

### ԳԵՏՆԱԽՆՁՈՐՈՎ ԱՂՅԱՆ

4 անձի համար անհրաժեշտ են.

- 1 քիլօ գետնախորձոր
- 300 կրամ կանաչ յուրիա, բարակ-ոլորուն
- Թարմ ռեհան
- Թարմ անանուխ
- Ապուրի դգալ մը սնոպար
- Պճեղ մը սխտոր
- Չիթախի
- Քաղցի
- Աղ, պղպեղ

Պատրաստութեան կերպը.

Ռեհանն ու անանուխը լուայ, ցամքեցնել, ապա մանրել: Կեղուել եւ մանրել սխտորի պճեղը:

Խորունկ ամանի մը մէջ խառնել անանուխը, ռեհանը, սխտորը, սնոպարը, ձիթախիը եւ աղը:

Գետնախորձորները իրենց կեղեւով խաշել շուրջ 25 վայրկեան, կեղուել եւ կլոր շերտել: Կանաչ յուրիան լուայ, մաքրել եւ եռացած աղի շուրի մէջ 15 վայրկեան խաշել. անոնք պէտք չէ որ շատ եփին, այլ ակոյալին տակ ծամուին:

Գետնախորձորն ու յուրիան աւելցնել խառ-



նորդին, քիչ մը քաղցի աւելցնել եւ պոռուրութեամբ խառնել: Փոխադրել ներկայանալի ամանի մը մէջ եւ գաղջ իրամցնել:

Երեսը կարելի է վարդարել սնոպարով եւ թարմ ռեհանով ու անանուխով:

Բարի՛ ախորժակ:

### ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՐԳ ՉԱՐՉԱՐԱՆԱՅ ԽԱԻԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ

Աւագ Հինգշաբթի, 12 Ապրիլ 2001ին, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Կարգ Չարչարանաց խաւարման գիշերի, արարողութիւնը պիտի կատարուի Հայաշէնի Ս. Յովհաննու-Կարապետ եկեղեցոյ մէջ, երեկոյեան ժամը 8:00ին:

Արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ՝

**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**  
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդի պաւակները՝ մասնակցելու Խաւարման գիշերի արարողութեան ու պօրացնելու իրենց հաւատքը Քրիստոսի խաչով:

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԳՉԱՐԱՆԱՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

On the Occasion of its 45th anniversary  
**HAIGAZIAN UNIVERSITY**  
Invites you to an evening of  
**Armenian Solo Dance**  
and  
**Poetry**  
**THE SPIRIT THE PASSION**  
with  
**SHAKEH AVANESSIAN**  
Tuesday April 17 at 8:00 p.m.  
First Armenian Evangelical Church Hall  
Adjacent to Haigazian University  
Mexico St., Kantari

ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՐԳ ՉԱՐՉԱՐԱՆԱՅ  
ԽԱԻԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ  
Աւագ Հինգշաբթի, 12 Ապրիլ 2001ին, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Կարգ Չարչարանաց խաւարման գիշերի, արարողութիւնը պիտի կատարուի Հայաշէնի Ս. Յովհաննու-Կարապետ եկեղեցոյ մէջ, երեկոյեան ժամը 8:00ին:  
Արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ՝  
**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**  
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)  
Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդի պաւակները՝ մասնակցելու Խաւարման գիշերի արարողութեան ու պօրացնելու իրենց հաւատքը Քրիստոսի խաչով:  
Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԳՉԱՐԱՆԱՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

# ՕՐԱՏԵՏՐ

## ՉԱՐժԱՊԱՏԿԵՐ

## ՇՆՈՒՏԵՍԻԼ

<b>Փ. ԳԱՌՆՆԻՍ</b> (Հափսա, Ամփիր / Տիգ, Ստոնո, Էլիթ, Մրայլես 2001, Կայարս, Սեթ Էլի, Լա Սալիճա) - Պեճ Աճլար օդանավի իր տրանսպորտը կրող հաղորդակցող մասնունակ ճանապարհորդ մը, որ կը մահանայ ճորձ օդանավին խորտակման դեպքերին: Պեճ կը ներկայանայ ճանապարհորդին կողմից (Կուրճեր Փայրո) զայն սխիթարելու եւ կը սիրահարի անոր: <b>Փ. ԼԵՅ ԻՓ ԶՈՐՈՐՈՐ</b> (Փլանք / Ապրած, Չուր, Բնորոտ) - Աշխարհը փոխելու առաջարկ: Ներկայացնողն է աշակերտը: Գործադրողները աշակերտին մայրը շնորհ շնորհ է ուսուցիչը Քեֆեր Սիլվիոյ: <b>Ֆ. ԱՅՆՆԵՐԿ ԶՈՐՈՐՈՐ</b> (Հափսա, Ամփիր / Տիգ, Ստոնո, Էլիթ, Մրայլես 2001, Կայարս, Սեթ Էլի) - Ընկերային կեանքէ հրաժարած նշանավոր գրագետ մը՝ Օն Բանըրի, կը փորձէ համոզել սեւաւոր երիտասարդ մը (որ նոյն կարգութեան մէջ կը գտնուի) հրաժարելու մեծակեանքներէն: <b>Թ. ԱՎԵՐԿ (Ամփիր) Սոֆի</b> , Կայարս, Լա Սալիճա, Փլանք / Ֆրոնտ, Ամպաստ, Սորաիլի) - Մաքսի-ճերու պայքարը պարտուցողին շուրջին տարիներու համար: Գլխ. դերակատարներ՝ Մայքլ Տակը, Քարոն Զերա Օնոգ, կը ներկայանան Տե Յոնո: <b>ԸՆՔԱՆՈՒՄ</b> (Հափսա, Ամփիր / Տիգ, Ստոնո, Սեթ Էլի) - Ժուլիէն Պիճը իր պատրաստած շորոշ-մերկեր կը հմայէ յաջակողմը: Ապագան կը պատահի սպասուածը եւ ինք կը հմայուի երիտասարդով մը (Օնո ԵՄ Ել): <b>Բ. ԱՆ ԼՈՒՆ ԲԱՆ</b> (Ամփիր / Ստոնո) - Լոյս (Ֆրանց Փոքրաց) 20 վարկեան, ունի գտնելու մաքսիսի մը կորսուած դրամը, փրկելու իր ընկերը: <b>Հ. ԱՆ ԿՈՒՄԱՆ</b> (Ամփիր / Սոֆի, Մրայլես 2001, Կայարս, Լա Սալիճա, Փլանք / Քայար, Բնորոտ, Ֆրոնտ, Ամպաստ) - Մայրեան անտրոպոլոգիայի ուսանող մը, որով մէջ տոքս, Հանդիս (Աճրոնի Հոմիոք) բանուէր փայլելու ետք կը հետապնդէ հրաշքով իր «հրաշքերէն» հուսալից ճակիչը «որ» մը... <b>Տ. ԱՎԵՐԿ ԶՈՐՈՐՈՐ ԱՅ ԼՈՒՆ ԵՆ ԱՄԿԱՆ ԿԵՆՏՐԱՆ</b> (Ամփիր / Մրայլես 2001, Ամպաստ, Փլանք / Քարոն, Ֆրոնտ, Բնորոտ) - Հերոսներն են Բոպար Տը Նիքո եւ կենդանի գտնելու դրամը հաշտելու համար իւր հիմարտը, իսկ «Բոպար»-ը Պայտիքընը - որպէս փրկարար... <b>Բ. ԱՅՆՆԵՐԿ ԿԵՆՏՐԱՆ</b> (Փլանք / Ֆրոնտ) - Պեճ Յար բանուէր ազատ արձակուելու ետք կը ներկայանայ շարք թիւերին, կարելով անոր, թէ ինք բարեկամն է, որուն հետ կը նախկինը եւ որուն ղեկին ծագող չէր: <b>Փ. ԱՎԵՐԿ ԱՅ ԼՈՒՆ</b> (Փլանք / Ապրած, Չուր, Բնորոտ, Ֆրոնտ, Ֆրոնտ) - Երկրաչափի մը կ'անուանողի անորձնական կողմ: Անոր կ'ընկերը (Մէկ Ռայն) կը դիմէ անուանողներու դէմ պայքարող մասնագետի մը (Ռատըր Քոթ) օժանդակութեան գտնելու իր անուանը: <b>Տ. ԻՊՏ, ՈՒՆ ԵՆ ԵՄ ԱՅ ԲԱՆ</b> (Հափսա, Ամփիր / Ստոնո, Մրայլես 2001) - Երկու մտերմ բարեկամներ հիանալի երեկոյէր եւ անսահման զինուորները ետք, չեն իշեր թէ նախորդող զիջեր ո՞ր կ'անցնեցուցած են իրենց իրենց անտրոք: Դեր: Էջըն Բուրճըր եւ Ռիլիան Սըր: <b>Ք. ԱՄԻՐ ԸՆԿԵՐ</b> (Ամփիր / Փլանք / Ապրած, Չուր, Բայար, Բնորոտ, Ֆրոնտ) - Օղանային արկածն էր նոյն Լանքս ինքզինքը կը գտնէ անտարտաբախ կղզիի մը մէջ, որ 4 տարի կը վարէ «Բոպար»ը Քոթի հաղորդումներին ճանաչելու կեանք մը: <b>Բ. ԱՅ ԳՐԵՅՔԸՊԸԼ</b> (Հափսա) - Պրոս Ռիլիոն եւ Սասուէլ ԵՐԱՅԸ միասնական են, մին իր բնույթով, իսկ երկրորդը՝ միակ վերաբերողը անտարտաբախ կղզիին մէջ: <b>Կ. ԱՅՆՆԵՐԿ ԿԵՆՏՐԱՆ</b> (Ամփիր / Ստոնո, Մրայլես 2001, Կայարս, Էլիթ) - Մարտանոտի վարպետ մը հանգրստեան կողմէն ետք իր տոքսը կը նուրբ իր ուսուցիչը, բայց տուր կը կորստի եւ վարպետը կը վերադառնայ մարտահան: <b>Տ. ԱՎԵՐԿ ԶՈՐՈՐՈՐ</b> (Փլանք / Ապրած, Չուր, Բնորոտ) - Հոգեկան հիւանդ մը կ'ընկեր կ'անուանողն էր պայմանաւոր կու տայ ուստիկանութեան ... գտնելու որոշ ծածկ մը, այլապէս կը սպաննէ զանոնք: <b>Մ. Փ. Տ. Փ. ԱՎԵՐԿ ԶՈՐՈՐՈՐ</b> (Փլանք / Ապրած, Չուր, Բնորոտ) - Կրկն հիւանդարտ է Փեթի եւ անոր «ձեռք» փոխ խնդիրը «ձեռք» ծնողն է: Իսկ աղջկան հայրը Սի. Այ. Էլի նախկին գործակալ, խտարարու Ռայքըր Տը Նիքոն է... <b>ՍՐԱՀԱՆԿԱՆՔԻ ՀԵՆՈՒՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ</b> - Բնորոտ - 738439: Փլանք / Ապրած - 292192: Փլանք / Քայար - 912503/4: Փլանք / Փլանք - 04/718690: Ամպաստ - 217490: Էլիթ - 840286: Ամփիր / Ստոնո - 616706/7: Ֆրոնտ - 485590/1: Հափսա - 212526: Սեթ Էլի - 406706: Ամփիր / Տիգ - 792123/4: Ամփիր / Սոֆի - 204080: Սաճու - 562006/7: Կայարս - 05/455182/3/4:	<b>Է. Փ. Վ. Գ. Գ.</b> <b>Է. Փ. Վ. Գ. Գ.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b> <b>Մ. Դ. Ս. Ի.</b> <b>Ե. Լ. Ե. Ե.</b>
---	--

### ՏԻՆՆԻ ԿՐՆԵՆ ԱՍՏՂԵՐԸ

**ՃՈՒՑ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Զարգացուցէք ձեր աննորական գործունեութիւնը, բայց ձեր փափաքները իբրեւ իրականութիւն մի՛ նկատէք: Եղբ իրապաշտ եւ լաւատես:

**ՅՈՒՏ** (21 Ապրիլին 21 Մայիս)

Հսկեցէք ձեր զգացական հակագոյնը բինըներուն: Եղբ հանդարտ, լաւ լսեցէք ձեր խօսակցներուն առաջարկները եւ ըստ այնմ որոշում տուէք:

**ՆԵՐԿՈՒՆՏԻՆ** (22 Մայիսին 21 Յունիս)

Օրը ունի հակասութիւններ. ձեր տրամադրութիւնը մի՛ խանգարէք եւ ձեր հոգեկան կորովը բարձր պահեցէք, որպէսզի առաւել չվատարանայ կացութիւնը:

**ՆԵՐԿՈՒՆՏԻՆ** (22 Յունիսին 23 Յուլիս)

Ճնշուած էիք վերջերս, եւ ձեր հոգեկան աշխարհը բոյլ էր: Այսօր պիտի վերագտնէք ձեր կորովը եւ յաղթականի նման դուրս պիտի ելլէք ձեր նեղ կացութենէն:

**ԱՌԻՏ** (24 Յուլիսին 23 Օգոստոս)

Շատ լաւ է որ ձեր գործերը զարգացնելու եւ անցնելու: Պիտի կարենաք յարմար լուծումներ գտնել դրամական ձեր խնդիրներուն:

**ԿՈՅՍ** (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Պէտք է եի՞ք մը ընկեր դուրս գալու համար ձեր մտածումներէն. կարելորութիւն մի՛ տար անտրոք մանրամասնութիւններու:

**ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Զեր ընտանիքը պիտի օգնէ ձեզի. եւ դուք պիտի փութփէք կարգ մը հոգեր ձեր ուսերէն. ու պիտի յաջողիք իրագործելու կարգ մը դժուար նկատուած աշխատանքներ:

**ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Օգտագործեցէք ձեր եռանդը, բացառիկ նիզերով: Զեզի յանձնուած պարտականութիւնները կատարեցէք, որքան ալ դժուար ըլլան անոնք:

**ԱՂԵՆԱԿՈՐ** (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Պիտի յաղթահարէք դժուարութիւն մը՝ ձեր գործին վերաբերեալ: Ունիք հանելի ժամադրութիւններ ձեր անպարեզիմ մէջ: Օրը բախտաբեր է եւ հանելի:

**ԱՅՏԵՂԶԻՒՐ** (22 Դեկտեմբերին 20 Յունուար)

Ունիք սրանց չէիք եւ օգտաշատ կողմ փարայն: Կրճար կազմակերպել հանդիպում մը կամ պտոյտ մը ձեր սիրած անձներուն հետ: Փորձեցէք ձեր բախտը:

**ԵՆՎԱՆՈՅՇ** (21 Յունուարին 19 Փետրուար)

Այսօր զբաղեցէք թեթեւ աշխատանքներով, կարտեզ մշակելով, տուեկներ խնամելով: Զուարթ անձներով պիտի շրջապատուիք: Օրը բախտաբեր է:

**ԶՈՒԿ** (20 Փետրուարին 20 Մարտ)

Այնպէս տուէք երիտասարդ կամ պատանի անձի մը պահանջներուն, որ կարիք ունի ձեր բարոյական եւ նիւարական օգնութեան: Օգնեցէք տկարներուն:

LIVE ENTERTAINMENT EVERY NIGHT WITH **MARIA** INTERNATIONAL RUSSIAN-UKRAINIAN LEBANESE CUISINE

GREAT MOOD / GREAT FOOD GREAT PRICES

**PUB-RESTAURANT**

Ամեն երեկոյ ջերմ մթնոլորտի մէջ անցուցէք խանդավառ ժամեր: **Շայերեն եւ միջազգային երգեր մեկնաբանութեամբ՝ ՄԱՐԻԱՅի:**

Malibu Bay-Maameltein old road - tel: 09/643340-09/644888 (ext 180)

ԱՅՉԻԼ ԶԻՆԱՆԱՆՈՅԱՅԻՆ ԱՐԱՀՈՎԱՐՈՒԹԻՒՆ

ԱՅՉԻԼԻ ԱՌԱԽԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շիւանդանգային ապահովագրութեան հետ կը ստանան

- 10.000 ամերիկեան տոլարի կեանքի ապահովագրութիւն (LIFE)
- 10.000 ամերիկեան տոլարի արկածի ապահովագրութիւն
- 1000 ամերիկեան տոլարի իւրաքանչիւր գաւակի կորածնշակի ապահովագրութիւն
- 96 հիւանդանոցներու ցանց
- 110 խտարածանաչման կեդրոններու ցանց
- INFO SANTE բժշկական տեղեկատուական կեդրոնի ծառայութիւն
- GR ըրողնի հիւանդութիւններու դէմ ապահովագրութիւն
- 100 ամերիկեան տոլարի LOST «Ա. Պուլ-դուրեան կեդրոնէն սպասարկութիւն:

Սանդամանութեան համար հեռաձայնէ՛ք. 242556 եւ 242557 օրը:

**ARA TRAVEL** IATA ԱՇՐԱՍՏ

ARMENIAN AIRLINESի SALES AGENT,

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՍԲ ԿԸ ՅԱՅՆԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՄ, ՈՐ Կ'ԱՊԱՀՈՎԷ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՎԱՆ - ՊԵՅՐՈՒԹ ԵՒ ՇԱԼԵՊ - ԵՐԵՎԱՆ - ՇԱԼԵՊ

ARMENIAN AIRLINES ընկերութեան

Օղանաչային տոմսեր • Կարգաճի փոխադրութիւն

ԱՐԱ ԹՐԱՎԸԼ,

Պուրճ Լամուտ, Երանապատան շէքը, ԸՆՏ. 266594 - 261296 : FAX: 261296

ԿՈՒՅՈՒՄԻՆ

● HAMPY հաստատութեան համար կարուհիներ: ԸՆՏ. 01-254129:

**ԾԱԽՈՒ ԲԱՊԻՆ**

● «Շուիտայ Պիչ»ի մէջ: ԸՆՏ. 262123 եւ 257255:

**ԾԱԽՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

● Մարաշ, անուշափաճառ Նուկայի թաղ: ՀՆՏ. 03-948747:

**ԳՐԱՌՈՒԾ ՕՐ**

ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱԹ, 2 ՅՈՒՆԻՍ 2001

Studio **Lantern**

• Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

ԸՆՏ. 01-266866 եւ 03-695399

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ**

ԱՐԵՎՍՆԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՍՈՒՐԲ ԾԱՐԱԾ 2001

Այս Զինգարքի 12 Ապրիլ - ԽՆԻՍՏՈՒՄԻ ԳԵՇԵՐ. ՀԱՍՈՒՄ

Ժամը 8:30 Մանասաղոթին եւ Լամապատարագ

Ժամը 16:00 Ոսնուլայ

Ժամը 20:00 Խաւարման Գիշեր, Ըսկուն:

Այս Զինգարքի 13 Ապրիլ - ԹՎՈՒՄԻ ՏԵՍՈՒՆ

Ժամը 16:00 Երեկոյեան Մանասաղոթին, Զարչարանաց Զարոգ, Թափօր (Արիի. Կարգան եպս. Ազգարան):

Այս Զինգարքի 14 Ապրիլ - ԾՐԱԿԱՆՈՅՑ ԶԱՍԿԻ

Ժամը 17:00 Ընթերցում մարգարեական բղթց

Ժամը 18:00 Ա. Զատիկ ճրագալոյցի պատարագ:

Կհռանի 15 Ապրիլ - ԶԱՏԻՎ ՏԵՍՈՒՆ

Ժամը 10:00 ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՐԱԳ ԱՍԵՆ. ԵՒ ԳԵՐԵԶ. ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. (Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Լայոց)

Ժամը 11:30 Տան օրհնութիւն եւ Մաղթանք

Ժամը 19:00 Երեկոյեան պատարագ:

**VANLIAN Lighting**

17:15 - Բարի ակնթարթ

18:10 - Քուլիսներ

18:35 - Տուն - տունիկ

19:00 - Հայրեր

19:50 - Անկախութեան այբուբեն

19:55 - Պրեմիերա

20:00 - «Համալոյղմանի զինուոր»

22:00 - Հայրեր

22:20 - Կէս գիշերային ձեւարկ

23:00 - Հայրեր (ռուսերէն)

23:05 - Հայրեր (անգլերէն)

23:10 - «Տէնչանցով Լի Մտեր»

Արբանեակային հեռարձակում

23:10 - Երեկոյեան

Երեւան

23:25 - Քուլիսներ

Երեւան

23:45 - Անկախութեան այբուբեն

23:50 - Պրեմիերա

\* Վերջին շաբաթը ներքին կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններ:

Bourj - Hammoud

Tel: 01-265935 - 258152/3

**ՎԱԽԱՍԱՍՆՍ**

**ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ**

40 ԱՄԵԱԿ (1961 - 2001)

Երկար տարիներու փորձառութեամբ

**ԱՆՈՒՇԱՎԱԽԱՍՍԱՐԳԻՍ**

Կը պատրաստ ամեն տեսակ համել

- ԱՐԵՎԵԼԵԱՆ ԱՆՈՒՇԵՂԵՆԵՐ
- ԱՄԵՆ ԱՌԱՓՕՑ ԸՆԵՑԵ ԺՊՆԵ
- ՆԱԽԱՃԱԸ՝ ԲԵՐՈՒԱՍԱՆ ԵՒ ԵԼԵՐ ԿԱՐԱՆԱԿԱԿ
- ԸՆԵՑԻՒ ԽՍՈՐ ԵՒ ԱԹԱՅԵՑ
- ԶԱՍԿՈՒՆ ԿԱՐԱՆԱԿԱԿ ԵՒ ՍԱՍՈՒՆ

Պուրճ Լամուտ, Արաքս փողոց

ՀՆՏ. 01-261475

simrit GRW FAG Sphäerischer

MINASSIAN, BOULADIAN & CO. BALL & ROLLER BEARINGS

MERCEDES STR. KAZANDJIAN BLDG. MAR YOUSSEF, DORA - P.O.BOX 11-3494 RIAD EL SOLH BEIRUT 1107 2140 LEBANON



TEL:01/258547/8 MOBILE:03/628076 FAX:01/258549 - E-MAIL:fag.leb@dm.net.lb

«ԱԶՂԱԿ»Ի ՀԵՆՈՒՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶՂԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնէ՛ք հետեւեալ թիւերուն: -258526, 260115 եւ 241274:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ




### ՃԻՏԵԻ ԴԱՍԱԻՈՐՄԱՆ ՄԵՉ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒՆ ԳՐԱԻԱԾ ԴԻՐՔԵՐԸ

ՃԻՏԵԻ (ճատրակի միջազգային ֆեդերատիոն) դասաւորման մէջ (Ապրիլ 2001ի տուեալներով) 10 հայ վարպետներ 250 վարպետներու շարքին կը գրաւեն հետեւեալ դիրքերը. նշենք, որ բացի աշխարհի թիւ 1էն՝ Կէրի Գասպարովէն եւ Սերկէյ Մովսէսեանէն, մնացեալ բոլոր վարպետները կը ներկայացնեն Հայաստանը. Գասպարով կը ներկայացնէ Ռուսիան, իսկ Մովսէսեան՝ Չեխիան:

Կէրի Գասպարով. - առաջին  
Վլատիմիր Յակոբեան. - 28րդ  
Սերկէյ Մովսէսեան. - 43րդ  
Ռաֆայէլ Վահանեան. - 46րդ  
Սմբատ Լպուտեան. - 58րդ  
Աշոտ Անաստասեան. - 86րդ  
Արտաշէս Մինասեան. - 134րդ  
Կարէն Ասրեան. - 156րդ  
Լեւոն Արոնեան. - 184րդ  
Գաբրիէլ Մարգուսեան. - 234րդ

### ՄԱՅՔԸԸ ԶՈՐՏԸՆ ԿԸ ՀԵՐՔԷ, ԹԷ ԴԱՇՏ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ



Պասքեթպոլի աշխարհի բոլոր ժամանակներու մեծագոյն աստղը՝ Մայքըլ ճորտըն երէկ հերքեց, թէ դաշտ պիտի վերադառնայ եւ վերջուտին պասքեթպոլ պիտի խաղայ, հաղորդեց «Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթը: Օր մը առաջ, թերթը գրած էր, որ ճորտըն կը մտադրէ յառաջիկայ եղանակին Ուաշինկթըն Ռիպաբլիկ հետ դաշտ իջնել: ճորտըն այժմ մեծ բաժնետէրերէն մէկն է Ռիպաբլիկին, խումբին բուն տիրոջ՝ Էյպ Փոլիսի կողմէն:

38 տարեկան ճորտըն կ'ըսէ. «Չեմ ուզեր դարձեալ խաղալ»:

### ՔԱՆԹՈՆԱ՝ ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏԻ ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈԼԻՍԸ

Ֆրանսացի մախարո Էրիք Քանթոնա ընտրուեցաւ Մանչեսթըր Եունայթըդի բոլոր ժամանակներու մեծագոյն ֆուտպոլիստը, վարմացնելով անգլիացի ծախարիչ համակիրները, որոնք միշտ ալ նախապէս օտարական մարզիկներուն դէմ պայքարին ենթադրուեցած են...

Մանչեսթըր Եունայթըդի պաշտօնաթերթը, որ կատարեց վիճակագրութիւնը (խումբին համակիրներուն մօտ), կը հաղորդէ, որ Քանթոնա շատ աւելի քան ստացած է, քան նախկին հականեր Պոպի Չարլթընը, Տենիս Լոն եւ Ճորձ Պեթը:

Քանթոնայի մրցանակը շնորհուեցաւ Երեք-շաբթի օր, Չարլթընի մրցումի աւարտին, մարզիչ Ալեքս Ֆերկլըսընի ձեռնարկով: Քանթոն, որ Մանչեսթըրի հետ շահած է 4 տիտղոս՝ 2 պիտլ-եանութեան եւ 2 բաժակի, համակիրներու ծափահարութեան տարափին տակ ստանձնեց մրցանակը՝ հպարտօրէն եւ իր արտասանած խօսքին մէջ ըսաւ, որ շատ ուրախ ու հպարտ է այս կոչումին արժանանալուն համար:

Քանթոնա 1996-97 եղանակի աւարտին լքեց ֆուտպոլը, կանուխէն: Ան միայն 30 տարեկան էր: Սակայն ան դիմեց այս քալին՝ գագաթին վրայ հետանալով եւ ոչ վայրէջքի: Ան հակառակ իր կոուսպան եւ խնդրայարոյց նկարագիրին, հանդիսացաւ մեծ, շատ մեծ ֆուտպոլիստ մը, բազմակողմանի շտրկներով եւ մանաւանդ շատ սիրուեցաւ համակիրներուն կողմէ, քան իր մարզիչ անձնաւորութիւն մը ըլլալով:

### ՖԻՖԱԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ ԻՏԱԼԻԱ ԲԱՐՁՐԱՅԱԻ 4ՐԴ ԴԻՐՔ

ՖԻՖԱԻ կողմէ հրապարակուած այս ամսուան ընդհանուր դասաւորման առաջին երեք դիրքերը մնացին անփոփոխ. Պրապիլ առաջին, Ֆրանսա՝ երկրորդ եւ Արժանթին՝ երրորդ:

Սակայն չորրորդ դիրքէն դէպի վար դասաւորումը կրեց կարգ մը փոփոխութիւններ: Առաջին հերթին, Իտալիա Փորթուգալէն իւրեք 4րդ դիրքը:

Չորս ամսուան բացակայութենէ ետք, Գերմանիա յաջողեցաւ առաջին տասին մէջ դիրք մը ապահովել, 11րդ դիրքէն բարձրանալով 8րդ դիրք: Անգլիա եւս ուստում արձանագրեց 16րդ դիրքէն բարձրանալով 14րդ դիրք:


Մեծագոյն ուստում արձանագրող կազմերը սակայն եղան Լեհաստան եւ Աւստրիա: Առաջինը բարձրացաւ 9 դիրք, իսկ երկրորդը՝ 8 դիրք:

Տական դիրքի ուստումներ արձանագրող կազմերը սակայն եղան Լեհաստան եւ Աւստրիա: Առաջինը բարձրացաւ 9 դիրք, իսկ երկրորդը՝ 8 դիրք:

1.- Պրապիլ (առաջին)	807
2.- Ֆրանսա (2րդ)	792
3.- Արժանթին (3րդ)	770
4.- Իտալիա (5րդ)	750
5.- Փորթուգալ (4րդ)	735
6.- Չեխիա (6րդ)	732
7.- Սպանիա (7րդ)	725
8.- Գերմանիա (11րդ)	714
9.- Փարակուէյ (8րդ)	713
10.- Հոլանտա (9րդ)	709
11.- Ետիոպիա (10րդ)	697
12.- Ռումանիա (13րդ)	688
13.- Մեքսիքա (12րդ)	681
14.- Անգլիա (16րդ)	677
15.- Քոլումբիա (15րդ)	667
16.- Նորվեգիա (14րդ)	666
17.- Խրուաթիա (17րդ)	665
18.- Մ. Ն. (18րդ)	659
19.- Շուէտ (21րդ)	645
20.- Ռուսիա (19րդ)	642
23.- Լեհաստան (32րդ)	627
23.- Սկովտիա (28րդ)	627
29.- Սէնտալան Արաբիա (25րդ)	616
30.- Ալիը (35րդ)	611
30.- Մարոք (30րդ)	611
40.- Իրան (37րդ)	581
41.- Քորէա (39րդ)	578
42.- Ճափոն (42րդ)	572
93.- ՀԱՅԱՍՏԱՆ (93րդ)	447
104.- Սուրիա (102րդ)	407
110.- Լիբանան (110րդ)	381

### ԼԵՅՔԸՐԶ ՏԱՊԱԼԵՑ ՍԱՆՉԸ

Էն. Պի. Էն. Էրեկ-լան մրցումներուն, Լոս Անձելըսի մէջ տեղւոյն կազմը՝ Լէյքըր 106-80 արդիւնքով տապալեց Ֆեռնիս Սանչը, շնորհիւ իր երկու աստղերուն՝ Շաքի Օնիլի եւ Քոպէ Պրայընթի բացառիկ խաղարկութեան: Շաք նշանակեց 32 կէտ, իսկ Քոպէ՝ 20: Ասիկա Լէյքըրի յաջողական 5րդ յաղթանակն էր: Անիկա արդէն ապահոված էր փլէյ օֆի տոմարը:



Շաքի Օնիլ կը գերազանցէ Յաքալիտիսը:

Միննետոթ Թիւ-պըրվուլվի իր կարգին ապահովեց փլէյ օֆի վերջին տոմակը՝ Արեւմտեան շրջանին մէջ, պարտութեան մատնելով Վանքուվըր Կրիպիլսը (104-91): Ուոլի Չէչերպիսը եղաւ իր խումբին աստղը եւ նշանակեց 28 կէտ, մինչ անոր խմբակիցը՝ Թերըլ Պրանտըն կատարեց 10 էփսը:

Տաք եւ ճակատագրական մրցում մը եղաւ Տենվըր Նակեյց - Հիուսթըն Ռոքեթսը հանդիպումը, որ տեղի ունեցաւ թեքսասեան կազմին դաշտին վրայ, որուն տերերը 1 կէտով տեղի տուին 100-99 արդիւնքով: Այս պարտութիւնը վերջ դրաւ փլէյ օֆի տոմս մը ապահովելու Ռոքեթսի յոյսերուն:

Ստորեւ՝ երեկուան հանդիպումներուն արդիւնքները.

Քլիվլենտ - Օրլանտո 101-78

Մայքեմի - Ֆիլա-տէլֆիա 83-81	Փորթլենտ - Կոլորն Սթըյթ 116-88
Միլուոքի - Շիքալո 105-84	Միննետոթ - Վանքուվըր 104-91
Տենվըր - Հիուսթըն 100-99	Լէյքըր - Ֆեռնիս 106-80
Սան Անթոնիո - Տալա 91-79	Սաքրամենթո - Քլիփըր 116-109

### ԼԻՎԸՐՓՈՒԼ ԺԵՐԱՐԻ ՀԱՆԳԻՍՏ ՇՆՈՐՀԵՅ

Անգլիոյ ազգային խումբի միջնապահ Սթիւրն Ժերար, որ Լիվըրպոլի սինեթէն է, իր կազմին վերջին 3 մրցումներէն մէկուն պիտի չմասնակցի, որովհետեւ հանգիստի պէտք ունի:

Լիվըրպոլ 8 օրուան ընթացքին 3 մրցում ունի կատարելիք եւ նման գերխճողուած յայտագիրի մը մէջ յատկապէս Ժերարի նման «շատ աշխատող» մարզիկ մը հանգիստի կարիք ունի անպայման: Ճարտիւցի մարզիչ Ժերար Հուրիէ կ'ըսէ, որ չ'ուզեր Ժերարէն ֆիզիքական գերմարդկային ճիգ պահանջել եւ հետեւաբար անոր կը շնորհէ մէկ մրցում հանգիստ:

### ՊՈՒՆՏՍՈՒԿԱՆ ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ 29ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԸ

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պուստալիկա) 29րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր Շթուրթարթ իր դաշտին վրայ կը հիւրընկալէ Քոթայուսը (14րդ): 17րդ եւ նախավերջին դիրքին վրայ գտնուող Շթուրթարթ, որ չ'որս անգամ Գերմանիոյ ախոյեան հանդիսացած է, իր ամէն կարելին պիտի ընէ յաղթանակ մը արձանագրելու, որպէսզի հետեան վտանգաւոր գօտիէն:

Յաղթանակի մը պարագային Շթուրթարթ առժամաբար պիտի գրաւէ 14րդ դիրքը: Անիկա դաշտ պիտի ներկայանայ առանց իր բերդապահ Թիմօ Հիլտրպրէնտի (կախակալուած):

29րդ հանգրուանի գագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ Շաքաթ օր, որ պարագլուխի դիրքը գրաւող Պայէրն Միւնիխ պիտի հիւրընկալէ 2րդ դիրքը գրաւող Շալքէն, որ միայն մէկ կէտով ետ կը մնայ անկէ, Պայէր Լեւերքուլընի (3րդ) եւ Պորուսիա Տորթմունտի (4րդ) նման, որոնք եւս իրենց կարգին ունին 49ական կէտ:

Վերոնշեալ մրցումին արդիւնքը կրնայ դասաւորման պատկերը փոփոխութեան ենթարկել: Հիւրընկալ կազմը դաշտ պիտի ներկայանայ առանց փլէյմէյթըր Շթեֆան Էֆենպէրկի, Պիլքսթէ Լիպարպուրի, Թոմաս Լինքէի եւ Ճիւլիանի Էլպերի (կախակալուած):

Հակառակ Պայէրնի ունեցած բացակայութեան, Շալքէ դժուար առաքելութիւն մը ունի կատարելիք, որովհետեւ անիկա 1983էն ի վեր չ'է յաջողած Պայէրնը պարտութեան մատնել անոր դաշտին վրայ:

Պայէր Լեւերքուլըն, որ պիտի հիւրընկալէ Ֆրայպուրկը (10րդ), դաշտ պիտի ներկայանայ առանց Ուլֆ Քիշթըրնի (վիրաւոր):

Հետաքրքրական պիտի ըլլայ նաեւ Հերթա Պերլին - Պորուսիա Տորթմունտ մրցումը, նկատի ունենալով, որ երկու կազմերն ալ կը նկատուին տիտղոսի թեկնածուներէն: Պերլինի (5րդ) դէմ տեղի ունեցած մրցումէն շատ հաւանաբար բացակայի Տորթմունտի յետապահ Ետրկըն Քուլըր (վիրաւոր):

Ստորեւ՝ 29րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

**ԱՅՍՕՐ**  
Շթուրթարթ - Քոթայուս  
**ԶԱՐԱԹ**  
Վոլֆսպուրկ - 1860 Միւնիխ  
Քայլըրպայալտըրն - Այնթրախթ Ֆրանքֆորթ  
Պայէրն Միւնիխ - Շալքէ  
Պոխում - Վերտըր Պրեմըն  
Պայէր Լեւերքուլըն - Ֆրայպուրկ  
Հերթա Պերլին - Պորուսիա Տորթմունտ  
ԿիՐԱԿԻ  
Ունթըրհախինկ - Հանպա Ռոսթըր  
Համպուրկ - Քէյտլ

### ԿՈՒԱՐՏԻՈՒՆ ԿՈՒՉԷ ՀԵՌԱՆԱԼ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԷՆ՝ 17 ՏԱՐԻ ԵՏՔ

Ֆուտպոլիստի իր սպարէտը Պարսելոնայի հետ սկսած է անոր շապիկը 17 երկար տարիներ կրած Եոսիփ Կուարտիոյ երկ յայտարարեց, թէ պիտի լքէ իր ակումբը եւ միանայ այլ կազմի մը: Շատ հաւանական է, որ ան փոխանցուի անգլիական, ֆրանսական, գերմանական կամ իտալական ակումբի մը, կը յայտնէ ան:

30 տարեկան խմբապետ Կուարտիոյի Պարսելոնային հետաճող վստահաբար դժգոհութիւն պիտի պատճառէ իր համակիրներուն, որոնք մեծ համակրանք ունին անոր հանդէպ:

Կուարտիոյա, որ Պարսելոնայի հետ վեց անգամ շահած է Սպանիոյ ախոյեանութիւնը, այս եղանակին իր ակումբին հետ շատ չնչին յոյս ունի 7րդ անգամ ըլլալով տիրանալու տիտղոսին, սակայն ան նախքան Պարսելոնային իր հետաճումը ոչ մէկ ճիգ պիտի խնայէ շահելու Եո. Է. Լ.Ֆ. Ա.ի բաժակի մրցաշարքը...

### ՀԵՏԵԼԱՐՈՒ ԶԻՓՈԼԻՆԻ ԼՔԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄԸ

Իտալացի հեծելաւորը Մարիօ Չիփոլինի կէս ձգեց աշխարհի ախոյեանութեան 3րդ հանգրուանը, որ տեղի ունեցաւ Պեճիքայի մէջ (Պէնթ - Վեյվելիւմ), յետ ստամոքսի խանգարումի: Անոր խումբին «Սաէքո»ի պատասխանատուն կ'ըսէ, թէ ան վերջերս արդէն կը տառապէր ստամոքսային հարցէ:

Չիփոլինի վերադարձաւ Իտալիա եւ անմիջապէս սկսաւ դարմանումի ենթարկուիլ: 34 տարեկան մարզիկը երկրորդ հանգրուանի աւարտին կը գրաւէ դասաւորման 4րդ դիրքը՝ 70 կէտով:

Չիփոլինի, որ կը նկատուի մեծ հեծելաւորի մը, միշտ ալ խնդրայարոյց եղած է յատկապէս վերջին տարիներուն: Ան քանի մը անգամ դիմագրաւեց նաեւ խթանիչ դեղերու գործածութեան հարց եւ անոր ստեղծած գայթակղութիւնները պատճառ դարձան անոր վարկի անկման:

ՈՒՔՐԱՆԻՍ

ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԹԻՍՈՇԵՆՔՕ ԿԸ ԽՈՍԱՍՆԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

ՄՈՍԿՈՒԱ, 11 (ՌՌՑԹԸԸԸ) - Ուկրաինայի մէջ նախկին փոխ վարչապետ Եւոլիա թիմոշենքո, որ ընդդիմադիր ղեկավար մը դարձած է, Չորեքշաբթի օր խոստացած է իշխանութեան վերադառնալ՝ պայքարելու համար նախագահ Լէոնիտ Քուչմայի դէմ եւ վերջ տալու իր երկրին տնտեսապէս Ռուսիայէն կախեալ ըլլալու վիճակին:

Ռուսեւեռքանական յարաբերութիւնները լարուած են կազմի հայթայթումներու վճարումներու եւ ռուսական մէկ առաջարկին պատճառով, որ կ'ըսէ, թէ ռեքրանական պողպատեայ խողովակներու ներածումներուն վրայ մարտատուրք պէտք է դրուի: Պողպատեայ խողովակներու մարզը ռեքրանական բանալի ճարտարարուեստ մըն է:

Մոսկուա նաեւ կ'ուզէ ամէն զնով արդեւիակել Ռեքրանիոյ դէպի Արեւմուտք որեւէ հակում:

Թիմոշենքո, որ Քուչմայի կողմէ պաշտօնազրկուած է եւ ներկայիս փոստովեան ամբաստանութիւններ կը դիմագրաւէ, յայտնած է, թէ պիտի վերադառնայ «բանալի բարեփոխումներու» ձեռնարկելու համար:

Երեքշաբթի օր, հազարաւոր ռեքրանացիներ ցոյց մը կատարած են պահանջելով Քուչմայի հրաժարումը եւ աննախընթացօրէն ուժեղ գորակցութիւն ցուցաբերելով վարչապետ Վիքթոր Եուշչենքոյի հանդէպ, որ բարեկարգական մըն է:

ԻՍՐԱՅԷԼ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

տակ քանդուեցան: Իսրայէլացի զինուորներու ներխուժումին դէմ ելան հարիւրաւոր պաղեստինցի զինեալներ ու պահակութեան ուժերը: Բախումին ընթացքին սպանուեցան երկու պաղեստինցիներ, քանի մը ուրիշներ ալ վիրաւորուեցան:

Խան Եուսէֆի դէմ յարձակումը մաս կը կազմէ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի այն խոստումին, որ կ'ըսէր, թէ կարելի եղած բոլոր միջոցներուն պիտի դիմէ վերջ տալու համար պաղեստինեան ըմբոստութեան եւ միայն անկէ վերջ խաղաղութեան բանակցութիւններու ձեռնարկել: Շարոն ըսած էր նաեւ, որ իսրայէլեան ուժերը անակնկալ յարձակումներ պիտի գործեն չփոթի մատնելու համար պաղեստինցի զինեալները, որոնք պիտի չկարենան գուշակել, թէ յարող յարձակումը ուրկէ՞ եւ ե՞րբ տեղի պիտի ունենայ:

Ֆրանսա երէկ դատապարտեց իսրայէլի զինուորի մը իսրայէլեան յարձակումը եւ կոչ ուղղեց հակամարտ կողմերուն մեղմացնելու լարուածութիւնը:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ եւ Յորդանանի Ապտալա թագաւորը տեսակցութեան մը աւարտին շեշտեցին, որ վայրագութեան ախիբը պէտք է մեղմանայ, եւ թէ երկու կողմերը պէտք է որդեգրեն վստահութիւն ներշնչող միջոցառումներ:

Երկէ երեկոյան իսրայէլացի եւ պաղեստինցի բանազնացիներ իսրայէլի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Մարթին Ինտիբի բնակարանին մէջ բանակցութիւններ ունեցան արիւնահեղութիւններուն վերջ տալու առաջարկներով:

ՍՈՒՐԻԱ Եւ Մարոք երէկ դատապարտեցին պաղեստինցիներուն դէմ գործադրուած իսրայէլեան վայրագութիւնները: Նախագահ Պաշար Ասատ եւ Մոհամէտ թագաւորը իսրայէլէն պահանջեցին իր ուժերը հեռացրնել արաբական բոլոր գրաւուած հողերէն:

(ՌՌՑԹԸԸԸ)

ԲԱՆԱԿԸ ԿԸ ՅԵՏԱԶԳԷ...

Շարունակուած Ա. Էջէն

տարիներուն եւ անոնք վերջերս որոշած են գործակցիլ՝ իրենց միացեալ սահմանին երկայնքին ակնները վերցնելու համար:

«Այս կրճատումները տեղի ունեցան ի մտի ունենալով Թուրքիոյ ապահովական բոլոր նկատառումները», ըսած է սպայակոյտին մէկ հարդարութիւնը:

Անիկա յստակ դարձուցած է, թէ Թուրքիոյ ինքնապաշտպանութեան կարողականութիւնը որեւէ ձեւով պիտի չտկարանայ:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԴԵՍ ՅՈՅՑ

Միւս կողմէ, թրքական ոստիկանութիւնը երէկ բիրտով, ջուր արսկող «թնդանօթ»ներով եւ արցունքաբեր կապերով ցրուած է հակակառավարական ցոյց մը:

Անգարայի մէջ շուրջ 50 հազար հոգի հաւաքուած է վարչապետ Պիլիէնք Էճեւիտի հրաժարումը պահանջելով:

Բրտութիւններ ծայր տուած են, երբ կարգ մը ցուցարարներ ցոյց կապակերպողները քարկոծելու սկսած են: Քանի մը վայրկեան ետք, 2 խմբակներ փորձած են զիսաւոր ցոյցէն հեռանալ եւ անցնիլ ոստիկանութեան հաստատած պատնէշներէն՝ քառային պայմաններու մէջ դէպի խորհրդարան ուղղուելու համար:

Ցուցարարները ոստիկանութեան վրայ քարեր արձակած են եւ անիկա հակադարձած է: Երկու կողմերէն վիրաւորներ արձանագրուած են:

Ցուցարարները, որոնց մեծամասնութիւնը փոքր առեւտրականներ էին, քաղաքին մէջ ցրուած են:

Աւելի փոքր ցոյցեր տեղի ունեցած են Իսմիրի, Մերսինի եւ Պոլսոյ մէջ:

Վարչապետ Էճեւիտ, որ այս շաբաթ տնտեսական նոր ծրագիր մը պիտի ներկայացնէ, մերժած է ընթացք տալ հրաժարումի պահանջներուն: Ան յայտնած է, թէ հրաժարումի ցնցումն ու նոր կառավարութեան մը փնտռումը Թուրքիոյ որեւէ ձեւով օգտակար պիտի չըլլան, «այդ պատճառով պաշտօնի վրայ կը մնամ»:

(ՌՌՑԹԸԸԸ)

ՔՈԶԱՐԵԱՆ ԵՒ ՇԻՐԱՔ...

Շարունակուած Ա. Էջէն

որ ժամանակն է ամէն ինչ դնել թուղթի վրայ որեւէ պայմանագրի ձեւով», ըսաւ նախագահ Քոչարեան աւելցնելով, որ նոր փաստաթուղթը պիտի ըլլայ փաթեթային, ամբողջական լուծման առաջարկ:

Ան ըսաւ, որ ինք բազմիցս յայտարարած է այն սկզբունքներու մասին, որոնցմէ դուրս ինք հարցի լուծում չի նկատեր: «Ամենայնդէպս մեր կողմի բանակցութիւններուն մէջ այդ սկզբունքները յարգուած են», ըսաւ ան: Նախագահ Քոչարեան մերժեց յստակ պատասխանել այն հարցին, թէ արդէ ք Լեոնայի Ղարաբաղ պիտի մասնակցի՞ ժրնեի բանակցութիւններուն: Ան միայն ըսաւ, որ հայկական կողմը այդ հարցը բազմիցս դրած է սեղանի վրայ:

Պատասխանելով «ընդհանուր պետութեան» գաղափարի ի պորու մնալու հաւանականութեան մասին հարցնելի մը, նախագահ Քոչարեան ըսաւ, որ երբ «նոր փաստաթուղթը դրուի սեղանին վրայ, ապա ես ի վիճակի պիտի ըլլամ խօսելու սկզբունքներու մասին»:

Նախագահ Քոչարեան նշեց, որ յաջորդ հանդիպումը Մոսկուայի մէջ կայացնելու մասին ոչ թէ յայտարարութիւն, այլ՝ ենթադրութիւն եղած է:

Ան ըսաւ, որ ժրնեի մէջ յաջորդ հանդիպումը գումարելու գաղափարին դէմ չէ եղած ոռու համանա-

Նախագահ Շիրաքի հետ հանդիպումին անդրադառնալով, նախագահ Քոչարեան ըսաւ, որ ինք նախապէս տեղեակ պահած էր նախագահ Շիրաքը այդ հանդիպումի մասին: Ան յայտնեց, որ նախագահ Շիրաք բաւական քաջատեղեակ է հարցին ամբողջութեան:

Նախագահ Քոչարեանի համաձայն, նոր փաստաթուղթը, որ պիտի ներկայացուի ժրնեի հանդիպումին, Հայաստանին ի վնաս դրոյթներ պիտի չունենայ: «Երկկողմ բանակցութիւններու տարապէս սպառած էր ինքնուր ինքնուր նախագահները ճիշդ ժամանակին ընտրեցին ճիշդ աշխատանք», ըսաւ ան:

Նախագահ Քոչարեան ըսաւ, որ ինք չի կարծեր, թէ համանախագահութիւնը շատ

ուժեղ ճնշումի միջոցով կը պարտադրէ այս հարցին լուծումը: «Ձեռն կարծեր նաեւ, որ հարցին ստեղծումը ներկայիս ձեռնտու է միջազգային հանրութեան եւ նաեւ հակամարտ կողմերուն. չափաւոր ճնշում կրնայ ըլլալ, սակայն այս բանակցութիւններուն, որեւէ ճնշում կամ ճնշման փորձ չեմ նկատած, գոնէ մեր կողմին վրայ», ըսաւ նախագահ Քոչարեան:

Հայաստանի նախագահի համաձայն, համանախագահութիւնը պիտի չեն Լեոնայի Ղարաբաղի ոչ շրջափակուած վիճակի, Այրպէյճանի ուղղահայեաց ենթացալուծեան բացումն է Լեոնայի Ղարաբաղի բնակչութեան ապահովութեան միջազգային երաշխիքներու սկզբունքներուն վրայ:

ԱԶԳԱՅԻՆ ԸԱՅՏՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Հանրապետութեան նախագահը երէկ ընդունեց ընդհանուր դատախազ Ատնան Ատոտումի եւ պետութեան անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն Կոր. Էտուար Մանսուրի այցելութիւնները:

Նախագահ Լախուտ երէկ նաեւ ընդունեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտը, որուն հետ քննարկեց շրջանային ու պաղեստինեան շրջաններուն մէջ պարագայումները, ինչպէս նաեւ՝ Պաղեստինի մէջ իսրայէլեան բռնարարներուն վերջ դնելու համար քննարկուող գաղափարները:

Նախարար Համմուտ նախագահին պեկուցեց Եգիպտոսի նախագահ Հուսնի Մուպարաքի եւ Յորդանանի Ապտալա Բ. թագաւորի Ուաշինկթընի մէջ նախագահ Ճորձ Պուշի եւ ամերիկացի պաշտօնատարներու հետ հանդիպումներու արդիւնքներուն մասին արտաքին գործոց նախարարութեան ստացած տեղեկութիւններուն մասին:

Նախարար Համմուտ նախագահին պեկուցեց Եգիպտոսի նախագահ Հուսնի Մուպարաքի եւ Յորդանանի Ապտալա Բ. թագաւորի Ուաշինկթընի մէջ նախագահ Ճորձ Պուշի եւ ամերիկացի պաշտօնատարներու հետ հանդիպումներու արդիւնքներուն մասին արտաքին գործոց նախարարութեան ստացած տեղեկութիւններուն մասին:

Նաեւ խօսուեցաւ յառաջիկայ շաբաթ Պելճիքայի, Սուրիոյ, Աւստրալիոյ եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարներու Պէյրութ տալիք այցելութիւններուն, եւ աստրալիական Նիւ Սաւոթ Ուելլզ նահանգի խորհրդարանի նախագահի Պէյրութ այցելութեան նախապատրաստութիւններուն մասին:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ամր Մուսա նախագահ Լախուտի յղեց նամակ մը շնորհակալութիւն յայտնելու Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար Աբասկուտը շնորհաւորելուն համար: Եգիպտոսի դեսպան Ատէլ Խոտարիի փոխանցած պատգամին մէջ Մուսա նաեւ գոհունակութեամբ յայտնեց, որ իր նոր պաշտօնը ստանձնելէ ետք իր այցելելիք առաջին արաբական մայրաքաղաքը պիտի ըլլայ Պէյրութը:

Նախագահ Լախուտ երեսփոխան Քապալան Իսա Խուրիի հետ քննարկեց ընդհանուր հարցերը:

ՀԱԿԱՀՐԹԻՌԱՅԻՆ...

Շարունակուած Յոր Էջէն

Քիմիական Չէնքերու Արգիլման Կապմակերպութիւնը Ռուսիայէն կը պահանջէ, որ իր պահեստներուն, որոնք աշխարհի մեծագոյնն են, 20 առ հարիւրէն ձեռքապատի մինչեւ Ապրիլ 2002:

Ռուսիա իր 40 հազար թոնի հասնող պահեստները ժառանգած է նախկին Խորհրդային Միութենէն եւ անիկա պահուց քանդելու համար անհրաժեշտ 85 մ միլիար տոլարը չի կրնար յատկացնել:

(ՌՌՑԹԸԸԸ)

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամաճիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երկկէսօրին.

Table with 2 columns: Item name and Price. Includes gold, silver, and various metals.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 4830 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Lottery grid with 11 columns and 11 rows, showing numbers 1-11.

- 1. Պերոպակ, պատուական քար - Հոս:
2. Թնդալ - Մահացու հիւանդութիւն մը:
3. Ժամանակի միւտոր - Ռուբէն Որբերեանի երկերէն:
4. Տաղաչափեալ քերթուած - Կրկնուած բաղաձայններ:
5. Տիգրան Տէրոյեանի ծննդավայրը - Բոլորովին մերկ:
6. Իրերաշարժող տառեր - Ճղճմ:
7. Եւրոպական թագաւորութիւն:
8. Իգական անուն - Սուրբական լրատու գործակալութիւն:
9. Թանձր թուր - Արօր մաքրելու դաւազան:
10. Արար իշխան - Արքայական զգեստ:
11. Հետք - Ասպատակ:

Table with 11 columns and 11 rows, likely another lottery grid or data table.

ԹԻՒ 4829

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագները հետեւեալներն են:

Table with 2 columns: Currency/Item and Price. Lists various international currencies and their exchange rates.

ՈՍԿԻ

Table with 2 columns: Item name and Price. Lists gold and silver prices.

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Table with 2 columns: Item name and Price. Lists various goods and their prices.